



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

գանգատ թիվ 25240/20

Ալվինա ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆԸ եւ այլք

ընդդեմ Հայաստանի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
2023 թվականի նոյեմբերի 21-ին հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Գաբրիել Կուչկո-Ստադլմայեր [Gabriele Kucsko-Stadlmayer]՝ Նախագահ,

Արնֆին Բորդսեն [Arnfinn Bårdsen],

Ալենա Պոլաչկովա [Alena Poláčková],

Պաուլին Կոսկելո [Pauliine Koskelo],

Յովան Իլևսկի [Jovan Ilievski],

Պիտեր Պազոլայ [Péter Paczolay]՝ *դատավորներ*,

Աննա Մարգարյան [Anna Margaryan]՝ ad hoc (ժամանակավոր) դատավոր,

եւ Ռենատա Դեգեներ [Renata Degener]՝ Բաժանմունքի քարտուղար,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության չորս քաղաքացիների
կողմից ներկայացված վերոնշյալ գանգատը (միասին՝ դիմումատուներ), որը
ներկայացված է հավելվածում՝ 2020 թվականի հունիսի 26-ին տկն
Ալվինա Գյուլումյանը (առաջին դիմումատու), պրն Հրանտ Նազարյանը (երկրորդ

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

դիմումատու), պրն Ֆելիքս Թոխյանը (երրորդ դիմումատու) եւ պրն Հրայր Թովմասյանը (չորրորդ դիմումատու),

հաշվի առնելով կողմերի ներկայացրած դիտարկումները,

հաշվի առնելով Պալատի նախագահի՝ Կառավարության կողմից նախապես ներկայացված ցանկից Աննա Մարգարյանին *ad hoc* դատավորի պաշտոնին նշանակելու (Կոնվենցիայի 26-րդ հոդվածի 4-րդ կետ եւ Դատարանի կանոնակարգի 29-րդ կանոնի 1-ին կետի «ա» ենթակետ) եւ գործի քննությանը Հայաստանի մասով ընտրված դատավոր պրն Արմեն Հարությունյանի մասնակցությունը դադարեցնելու (28-րդ կանոնի 3-րդ կետ) վերաբերյալ որոշումը,

անցկացնելով խորհրդակցություն, կայացրեց հետեւյալ որոշումը.

ՓԱՍՏԵՐԸ

1. Դիմումատուները ծնվել են համապատասխանաբար 1956, 1959, 1956 եւ 1970 թվականներին: Նրանց ներկայացրել է Երեւանում գործող փաստաբան տկն Ս. Սահակյանը:

2. Հայաստանի կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է միջազգային իրավական հարցերով Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ պրն Ե. Կիրակոսյանը:

3. Կողմերի ներկայացրած գործի հանգամանքներն ամփոփվում են հետեւյալ կերպ.

4. 1996 թվականին առաջին եւ երկրորդ դիմումատուները, իսկ 1997 թվականին երրորդ դիմումատուն նշանակվել են որպես Սահմանադրական դատարանի անդամներ՝ ցմահ պաշտոնավարմամբ, այն է՝ մինչեւ նրանց կենսաթոշակի անցնելը: Այդ ժամանակ դատարանի անդամների կենսաթոշակային տարիքը յոթանասուն տարեկանն էր (տե՛ս ստորեւ՝ 29-րդ պարբերությունը):

5. 2003 թվականին առաջին դիմումատուի պաշտոնավարման ժամկետը նրա պահանջով համարվել է ավարտված: 2014 թվականին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում տասնմեկ տարի որպես դատավոր պաշտոնավարելուց հետո, նա կրկին նշանակվել է Սահմանադրական դատարանի անդամի պաշտոնում՝ ցմահ պաշտոնավարմամբ: Այդ ժամանակ տվյալ դատարանի անդամների համար կենսաթոշակային տարիքը վաթսուներեքն էր (տե՛ս ստորել՝ 30-րդ պարբերությունը):

6. 2015 թվականին Սահմանադրական դատարանի նշանակումների ընթացակարգում նշանակումներ կատարող մարմինների եւ դատավորների պաշտոնավարման ժամկետի կապակցությամբ կատարվել են էական փոփոխություններ¹ (տե՛ս ստորել 31-րդ պարբերությունը): Նոր կանոններն ուժի մեջ են մտել 2018 թվականի ապրիլի 9-ին:

7. Այդ ընթացքում՝ 2018 թվականի մարտի 2-ին, չորրորդ դիմումատուն, որն ավելի վաղ Խորհրդարանում այդ ժամանակ իշխող կուսակցության անդամ էր (մինչեւ 2018 թվականի փետրվարի 16-ը), եւ Արդարադատության նախարարը (մինչեւ 2014 թվականի ապրիլի 30-ը) նշանակվել են որպես Սահմանադրական դատարանի անդամներ՝ ցմահ պաշտոնավարմամբ. նրա նկատմամբ կիրառելի կենսաթոշակային տարիքը վաթսուներեքն էր, ինչպես առաջին դիմումատուի դեպքում: Գ.Հ.-ն, որն այդ ժամանակ Սահմանադրական դատարանի նախագահն էր, պետք է պաշտոնավարեր մինչեւ 2018 թվականի մարտի 23-ին իր կենսաթոշակի անցնելը, սակայն կենսաթոշակի անցնելուց անմիջապես առաջ նա Ազգային ժողովի կողմից նշանակվել է որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամ եւ այդպիսով հրաժարական է տվել տվյալ դատարանի Նախագահի՝ իր պաշտոնից: 2018 թվականի մարտի 21-ին Ազգային ժողովը չորրորդ դիմումատուին նշանակել է որպես Սահմանադրական դատարանի

¹ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններն ուժի մեջ մտնելու պահից, այն է՝ 2018 թվականի ապրիլի 9-ին, «Սահմանադրական դատարանի անդամներ» եզրույթի փոխարեն օգտագործվել է «Սահմանադրական դատարանի դատավորներ» եզրույթը:

նախագահ՝ ցմահ պաշտոնավարմամբ, այն է՝ մինչ 2035 թվականին իր կենսաթոշակի անցնելը՝ նոր կանոններն ուժի մեջ մտնելուց առաջ իր վերջին հերթական նիստի ժամանակ, որը տեղի է ունեցել 2018 թվականի մարտի 20-21-ը:

8. 2018 թվականի ապրիլին եւ մայիսին Հայաստանում տեղի են ունեցել հակակառավարական մեծամասշտաբ ցույցեր, որոնք հայտնի են «Թավշյա հեղափոխություն» անվանմամբ: «Թավշյա հեղափոխություն»-ը պատճառ դարձավ նախկին կառավարության՝ խաղաղ ճանապարհով տապալման, եւ ընդդիմության առաջնորդ Նիկոլ Փաշինյանը՝ վարչապետի պաշտոնում նշանակման: Ի վերջո, 2018 թվականի դեկտեմբերին անցկացված խորհրդարանական ընտրություններում «Իմ քայլը» դաշինքը համոզիչ հաղթանակ տարավ: «Իմ քայլը» դաշինքը, որն աջակցում էր Նիկոլ Փաշինյանին, Ազգային ժողովում 132 մանդատից ստացավ 88-ը (ինչը սահմանադրական մեծամասնություն է կազմում), մինչդեռ իշխող նախկին Հանրապետական կուսակցությունը որեւէ մանդատ չստացավ: Նոր կառավարության առաջնային նպատակներից մեկը էնդեմիկ կոռուպցիոն համակարգի դեմ պայքարն ու դատաիրավական բարեփոխումների իրականացումն էր²: Սկզբնական շրջանում նրանք մտադիր էին ներմուծել ստուգման առանձնահատուկ ընթացակարգեր՝ ստուգելու ներկայիս դատավորների համապատասխանությունն իրենց դատական գործառույթները շարունակելու համար: Սակայն հայ հասարակության շրջանում եւ միջազգային գործընկերների հետ երկխոսության գործընթացից հետո այդ գաղափարին ընթացք չի տրվել:

9. 2018 թվականի սեպտեմբերի 13-ին Արման Դիլանյանը նշանակվել է Սահմանադրական դատարանի դատավոր՝ չերկարաձգվող տասներկուամյա ժամկետով՝ նոր կանոններին համապատասխան (տե՛ս ստորեւ՝ 31-րդ պարբերությունը):

² Տե՛ս դատական եւ իրավական բարեփոխումների ռազմավարությունը, որն ընդունվել է Կառավարության կողմից՝ 2019 թվականի հոկտեմբերին:

10. 2019 թվականի մայիսի 19-ին Հայաստանի վարչապետը խստորեն դատապարտեց դատարաններին՝ նախկին նախագահ Քոչարյանին³ գրավի դիմաց ազատ արձակելու որոշման համար, խնդրեց իր աջակիցներին շրջափակել դատարանի շենքերը եւ կոչ արեց վերափոխել դատական համակարգը⁴: Հաղորդվում է, որ այդ օրը Սահմանադրական դատարանի առջեւ հավաքվել են մոտ 150 ցուցարարներ: Դիմումատուների տրամադրած տեսագրություններում, որոնց իսկությունը չի վիճարկվել Կառավարության կողմից, նաեւ երեւում է, որ 2019 թվականի հունիսի 5-ին ոստիկանության ծառայողները ստիպված են եղել առաջին դիմումատուին դատարանի շենքից դուրս ուղեկցել՝ պայմանավորված ցուցարարների փոքր խմբի ներկայությամբ:

11. Դրանից ոչ շատ ուշ հրաժարական են տվել Բարձրագույն դատական խորհրդի գրեթե բոլոր այն անդամները, որոնք նշանակվել էին «Թավշյա հեղափոխությունից» առաջ:

12. 2019 թվականի հունիսի 18-ին Վահե Գրիգորյանը նշանակվել է Սահմանադրական դատարանի դատավոր՝ չերկարաձգվող տասներկուամյա ժամկետով՝ նոր ընթացակարգին համապատասխան: Նա անմիջապես իրեն հռչակել է Սահմանադրական դատարանի նախագահ եւ վիճարկել է դատարանի բոլոր այն դատավորների լիազորությունները, որոնք նշանակվել էին 2018 թվականի ապրիլի 9-ից առաջ. դա այն ամսաթիվն է, երբ ուժի մեջ են մտել 2015 թվականի փոփոխությունները (տե՛ս ստորեւ՝ 31-րդ պարբերությունը): Դրանից քիչ անց Վենետիկի հանձնաժողովը որոշում է կայացրել խնդրանքով դիմել Հայաստանի նախագահին առավել ուշադրությամբ հետեւելու

³ Ռոբերտ Քոչարյանը Հայաստանի նախագահ է եղել 1998 թվականից մինչեւ 2008 թվականը: 2018 թվականի հուլիսի 26-ին նրան մեղադրել են 2008 թվականի ցույցերի ընթացքում բռնաճնշումների համար, ինչը տասը մարդու մահվան պատճառ է դարձել: Նրա դատաքննությունը սկսվել է 2019 թվականի մայիսի 13-ին: Դատաքննությունն ավարտվել է 2021 թվականի մարտին՝ այն բանից հետո, երբ Սահմանադրական դատարանը հակասահմանադրական է ճանաչել Քրեական օրենսգրքի այն դրոյթը, որին համապատասխան նրան բերման էին ենթարկել:

⁴ Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի 119-րդ լիազումար նիստի զեկույցը (2019 թվականի հունիսի 21-22), CDL-PL-PV(2019)002rev, էջ 17:

Սահմանադրական դատարանի հետ կապված իրավիճակին՝ նպատակ ունենալով անհրաժեշտության դեպքում հրապարակային հայտարարություն անել: Վենետիկի հանձնաժողովի 119-րդ լիազումար նիստի զեկույցի համապատասխան մասն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Հանձնաժողովը ... տեղեկացված է եղել, որ Սահմանադրական դատարանի նորընտիր դատավորը կասկածի տակ է դրել Դատարանի 9 դատավորներից այն 7-ի լեգիտիմությունը, որոնք ընտրվել են 2015 թվականի սահմանադրական փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առաջ: Նրա հիմնական փաստարկն այն էր, որ Սահմանադրության նախկին տեքստի համաձայն՝ նրանք ընտրվել էին որպես Սահմանադրական դատարանի անդամներ, մինչդեռ նոր տեքստում նշված է Սահմանադրական դատարանի դատավորներ: Վերանայված Սահմանադրության 213-րդ հոդվածը, սակայն, հստակ եւ միանշանակ սահմանում էր, որ Սահմանադրական դատարանի նախագահը եւ անդամները, որոնք նշանակվել են փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առաջ, պետք է շարունակեն պաշտոնավարել մինչեւ 2005 թվականին փոփոխված Սահմանադրությամբ նախատեսված՝ իրենց պաշտոնավարման ժամկետի ավարտը: Մտահոգիչ էր այն հանգամանքը, որ դատավորի կողմից արված այդ հայտարարությունը խորհրդարանում ընդունվել է ծափահարություններով, ինչի արդյունքում կարող էր գործող դատավորների մանդատներին միջամտելու վտանգ առաջանալ»⁵:

13. 2019 թվականի հունիսի 28-ին դատավոր Վահե Գրիգորյանը (տե՛ս վերոնշյալ 12-րդ պարբերությունը) իշխանություններին ուղղված նամակում կրկնել է իր պնդումն այն մասին, որ Սահմանադրական դատարանը ճգնաժամի մեջ է՝ միեւնույն ժամանակ ընդգծելով իր անձնական հարգանքը բոլոր դատավորների նկատմամբ: Նա մասնավորապես նշում է. «Դրանից հետեւում է, որ անունները նշելու նպատակն է ապահովել փաստերի ճշգրտությունը, փոխարեն կենտրոնանալու այն անհատների վրա, որոնց նկատմամբ անձնական հարգանքից բացի այլ վերաբերմունք չունենմ», միեւնույն ժամանակ՝ «Չունենալով որեւէ կասկած՝ Սահմանադրական դատարանի անդամների բարեվարքության եւ ազնվության, ինչպես նաեւ նրանց անձնական բարձր որակների հետ կապված...»:

⁵ Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի 119-րդ լիազումար նիստի զեկույցը (2019 թվականի հունիսի 21-22), CDL-PL-PV(2019)002rev, էջ 18:

14. 2019 թվականի հուլիսի 17-ին Հայաստանի վարչապետը Ազատ Եվրոպա/Ազատություն ռադիոկայանի լրագրողին տված հարցազրույցի ժամանակ նշել է, որ Սահմանադրական դատարանը Հայաստանի ամենավարկաբեկված հաստատություններից մեկն է եղել, քանի որ սկսած 1996 թվականից՝ այն օրինականացրել է բոլոր ընտրակեղծիքները, եւ որ դրա նկատմամբ եղել է վստահության ճգնաժամ, եւ որ որոշված է եղել ունենալ այդպիսի նոր դատարան: Նա ավելացրել է. «2019 թվականին Հայաստանը պետք է ունենա 2019 թվականի Սահմանադրական դատարան: Սա քաղաքական խնդիր է: Ոչ ոք թող չկասկածի, որ այս խնդիրը լուծվելու է»:

15. 2019 թվականի սեպտեմբերի 6-ին Հայաստանի իշխանությունները խնդրել են Վենետիկի հանձնաժողովին, որ վերջինս նախապատրաստի կառավարության կողմից առաջարկված՝ դատական բարեփոխումների փաթեթի հետ կապված իր եզրակացությունը, որը, *inter alia* (ի թիվս այլնի), նախատեսում էր ինքնակամ վաղ կենսաթոշակի անցնելու սխեման Սահմանադրական դատարանի դատավորների որոշակի կատեգորիայի համար (այն է՝ այն դատավորների, որոնք նշանակված են եղել ցմահ պաշտոնավարմամբ՝ նախկին ընթացակարգին համապատասխան, որոնցից են ներկայիս դիմումատուները):

16. 2019 թվականի հոկտեմբերի 4-ին Ազգային ժողովը որոշել է դիմել Սահմանադրական դատարան՝ Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ կետի հիման վրա չորրորդ դիմումատուի պաշտոնավարման ժամկետն ավարտված համարելու պահանջով (տե՛ս ստորել՝ 33-34-րդ պարբերությունները): 2019 թվականի հոկտեմբերի 14-ին Սահմանադրական դատարանը պահանջն անընդունելի է ճանաչել:

17. 2019 թվականի հոկտեմբերի 14-ին Վենետիկի հանձնաժողովը հրատարակել է իր եզրակացությունը վերոնշյալ 15-րդ պարբերությունում նշված՝

վաղ կենսաթոշակի անցնելու սխեմայի վերաբերյալ⁶: Այն սկզբունքորեն եզրակացրել է, որ պայմանով, որ այդ սխեման լինի բացառապես կամավոր եւ չխոչընդոտի Սահմանադրական դատարանի արդյունավետ գործունեությունը, առկա չէին այնպիսի չափանիշներ, որոնք կստիպեին Վենետիկի հանձնաժողովին վիճարկել այն: Եզրակացության համապատասխան մասը ներկայացված է ստորել՝ 54-րդ պարբերությունում:

18. 2019 թվականի հոկտեմբերի 29-ին Վենետիկի հանձնաժողովի նախագահն արել է հետեւյալ հայտարարությունը.

«Արդեն մի քանի ամիս է, ինչ ես ուշադիր հետեւում եմ Հայաստանում առկա իրավիճակին: Ես խիստ մտահոգված եմ մի կողմից՝ Կառավարության եւ Խորհրդարանի եւ մյուս կողմից՝ Սահմանադրական դատարանի միջեւ առկա բաց հակամարտության կապակցությամբ: Վերջին իրադարձությունների արագընթաց փոփոխությունը եւ դրանց՝ զանգվածային լրատվական միջոցներով լուսաբանումը չեն նպաստում խնդիրների՝ խաղաղ ճանապարհով կարգավորմանը: Կառավարման ժողովրդավարական ձեւի դեպքում խորհրդարանը ժողովրդական ինքնիշխանության ավանդապահն է եւ այդպիսով ունի ամենաբարձր ժողովրդավարական լեգիտիմությունը: Սահմանադրական դատարանը պաշտպանական հաստատություն է, որին վստահված է պահպանել սահմանադրական արժեքները: Ժողովրդավարական երկրում պետական բոլոր հաստատությունները եւ պաշտոնատար անձինք պետք է հարգանք ցուցաբերեն իրենց մանդատի, պարտավորությունների եւ իրավասությունների նկատմամբ, ինչպես նաեւ ընդունեն եւ հարգեն այլ հաստատությունների մանդատը, պարտավորությունները եւ իրավասությունները: Նրանք պետք է կիրառեն համապատասխան ինստիտուցիոնալ զսպվածություն, բարեխղճորեն հետեւեն համապատասխան ընթացակարգերին եւ հարգանք ցուցաբերեն միմյանց նկատմամբ: Դա չանելու դեպքում, երբ բացակայում է ժողովրդավարական մշակույթը եւ հասունությունը, վտանգվում է պետական հաստատությունների գործունեությունը եւ հասարակության ժողովրդավարական, քաղաքացիական եւ տնտեսական առաջընթացը: Ես կոչ եմ անում բոլոր կողմերին

⁶ Տե՛ս CDL-AD(2019)024 Վենետիկի հանձնաժողովի եւ Եվրոպայի խորհրդի՝ Մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինության (ՄԻԳՏ) Մարդու իրավունքների տնօրինության (ՄԻՏ) համատեղ եզրակացությունը Դատական օրենսգրքի եւ Վենետիկի հանձնաժողովի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 11-12-ը կայացած 120-րդ լիագումար նիստում ընդունված որոշ այլ օրենքների փոփոխությունների վերաբերյալ:

ցուցաբերել զսպվածություն, փոխադարձ հարգանք եւ կառուցողական ինստիտուցիոնալ համագործակցություն՝ այս մտահոգիչ իրավիճակի դեէսկալացիայի եւ Հայաստանի Սահմանադրության անմիջական գործողությունը վերահաստատելու նպատակով»:

19. Չորս ամիս տեսած քրեական գործով քննությունից հետո՝ 2019 թվականի դեկտեմբերի 27-ին, որպես Արդարադատության նախարար իր պաշտոնավարման ընթացքում չորրորդ դիմումատուին մեղադրանք է առաջադրվել պաշտոնեական դիրքի չարաշահման համար: Ենթադրվում էր, որ նա հարկադրել է մի քանի նոտարի եւ Նոտարական պալատին վարձակալել իրեն պատկանող տարածքն արհեստականորեն բարձրացված գներով: Գործի համատեքստում իրավապահ մարմինների կողմից հարցաքննվել են նրա հայրը եւ դուստրերը: Պարզ է դառնում, որ գործը ենթակա է քննության համապատասխան դատարանում: Նաեւ պարզ է դառնում, որ Խորհրդարանի նախկին խոսնակի եւ նրա նախկին ավագ օգնականներից մեկի դեմ հարուցված՝ չորրորդ դիմումատուին որպես Սահմանադրական դատարանի նախագահ նշանակելու վերաբերյալ գործը (տե՛ս վերելում՝ 7-րդ պարբերությունը) տվյալ պահին նույնպես ենթակա է քննության համապատասխան դատարանում: Ենթադրաբար նրանք ընդունել եւ հայտարարել են դատավոր Գ.Հ.-ի հրաժարականի մասին մինչեւ նրանից համապատասխան նամակ ստանալը եւ նամակը թվագրել են հետին ամսաթվով՝ նոր կանոններն ուժի մեջ մտնելուց անմիջապես առաջ՝ հնարավորություն տալով չորրորդ դիմումատուին նշանակվել ցմահ պաշտոնավարմամբ: Նրանց մեղադրանք է առաջադրվել պաշտոնեական դիրքի չարաշահման եւ կեղծիքի համար:

20. 2019 թվականի դեկտեմբերի 27-ին Սահմանադրական դատարանի այն դատավորներին, որոնք նշանակվել էին ցմահ պաշտոնավարմամբ՝ համաձայն հին ընթացակարգի, այդ թվում՝ սույն դիմումատուներին առաջարկել էին վաղ անցնել կենսաթոշակի՝ ստանալով նպաստներ իրենց աշխատավարձերի չափով:

21. 2020 թվականի փետրվարի 3-ին Վենետիկի հանձնաժողովի նախագահը Սահմանադրական դատարանի վերաբերյալ մեկ այլ հայտարարություն է արել.

«2019 թվականի՝ իմ հայտարարությունից հետո ես շարունակում եմ մտահոգված մնալ Հայաստանի Սահմանադրական դատարանի հետ կապված բաց հակամարտության կապակցությամբ: Այս առնչությամբ ես կիսում եմ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի զեկուցողների մտահոգությունները: Ես ցանկանում եմ վերհիշել 2019 թվականի հոկտեմբերին ընդունված՝ Վենետիկի հանձնաժողովի կողմից արված առաջարկություններն այն մասին, որ վաղ կենսաթոշակային սխեման Սահմանադրական դատարանում պետք է իրապես կամավոր լինի, բացառի անպատշաճ քաղաքական կամ անձնական ճնշումը նշված դատավորների նկատմամբ եւ չպետք է սահմանված լինի այնպես, որ այն ազդեցություն չունենա քննության ենթակա գործերի արդյունքի վրա: Վերջին հրապարակային հայտարարություններն ու գործողությունները չեն համապատասխանում այս չափորոշիչներին եւ չեն նպաստում իրավիճակի դեէսկալացիային: Ժողովրդավարական մշակույթը եւ հասունությունը պահանջում են ինստիտուցիոնալ զսպվածություն, բարեխղճություն եւ փոխադարձ հարգանք պետական հաստատությունների միջեւ: Կրկին ես կոչ եմ անում բոլոր կողմերին դրսևորել զսպվածություն եւ դեէսկալացնել այս մտահոգիչ իրավիճակը՝ ապահովելու համար Հայաստանի սահմանադրության ուղղակի գործողությունը»:

22. 2020 թվականի փետրվարի 6-ին խորհրդարանական մեծամասնության առաջարկով դադարեցվել է Սահմանադրական դատարանի այն յոթ դատավորների պաշտոնավարման ժամկետը, որոնք նշանակվել են 2018 թվականի ապրիլի 9-ից առաջ, որը 2015 թվականի սահմանադրական փոփոխություններն ուժի մեջ մտնելու ամսաթիվն է: 2020 թվականի ապրիլի 5-ին պլանավորվում էր անցկացնել հանրաքվե, սակայն այդ առաջարկին ընթացք չի տրվել:

23. Վաղ կենսաթոշակի անցնելու առաջարկն ընդունելու վերջնաժամկետը (տե՛ս վերելում՝ 20-րդ պարբերությունը) լրացել է 2020 թվականի փետրվարի 27-ին: Սակայն դատավորներից որեւէ մեկն այդ առաջարկը չի ընդունել:

24. 2020 թվականի մայիսին կառավարությունը հրավիրել է Վենետիկի հանձնաժողովին՝ եզրակացություն տալու սահմանադրական փոփոխությունների նախագծի վերաբերյալ՝ *inter alia* առաջարկելով, որ Սահմանադրական դատարանի՝ ընդհանուր առմամբ տասներկու տարվա փորձ ունեցող այդ

դատավորների պաշտոնավարման ժամկետները դադարեցվեն, եւ բոլոր մյուս՝ անգամ մինչ 2018 թվականի ապրիլի 9-ը նշանակված դատավորները շարունակեն պաշտոնավարել մինչեւ տասներկուամյա ժամկետի ավարտը: Այնուհետեւ առաջարկվել է դադարեցնել Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետը, բայց քանի որ նրա տասներկուամյա ժամկետը չէր լրացել, նա կարող էր շարունակել պաշտոնավարել որպես այդ դատարանի դատավոր:

25. 2020 թվականի հունիսի 22-ին Վենետիկի հանձնաժողովը հրատարակել է տվյալ գործով իր եզրակացությունը⁷: Եզրակացության համապատասխան մասը ներկայացված է ստորեւ՝ 55-րդ պարբերությունում: Կարճ ասած՝ այն ընդունում էր, որ Սահմանադրական դատարանի կազմի վերաբերյալ 2015 թվականի Սահմանադրության դրույթների ամբողջական կատարման նպատակն օրինաչափ էր: Նշված նպատակը դատավորների պաշտոնավարման անվտանգությունը եւ նրանց անկախությունը պահպանելու անհրաժեշտությանը համապատասխանեցնելու նպատակով Վենետիկի հանձնաժողովը խորհուրդ է տվել, որ տասներկուամյա ժամկետը դեռ չավարտած՝ դատավորները կարողանան շարունակել իրենց պաշտոնավարումը մինչեւ այդ ժամկետի ավարտը, եւ որ այն դատավորները, որոնք արդեն ավարտել են ծառայության տասներկուամյա ժամկետը, փոխարինումից առաջ հնարավորություն ունենան օգտվելու անցումային նոր ժամանակաշրջանից, որի տեւողությունը սահմանվում է Հայաստանի իշխանությունների կողմից: Վենետիկի հանձնաժողովն ափսոսանք է հայտնել, որ այն փոփոխությունները, որոնք չէին նախատեսում նման անցումային շրջան, այնուամենայնիվ, քննարկման են դրվել Ազգային ժողովում 2020 թվականի հունիսի 19-ին՝ եզրակացությունն ընդունելու օրը:

⁷ Տե՛ս CDL-AD(2020)16 եզրակացությունը երեք իրավական հարցերի շուրջ 2020 թվականի հունիսի 19-ին Վենետիկի հանձնաժողովի կողմից ընդունված՝ Սահմանադրական դատարանի դատավորների մանդատի վերաբերյալ սահմանադրական փոփոխությունների նախագծի համատեքստում:

26. Ազգային ժողովը նույն օրն ընդունել է այդ փոփոխությունները (տե՛ս ստորեւ՝ 32-րդ պարբերությունը): Ազգային ժողովի կանոնակարգի վերաբերյալ Սահմանադրական ակտի 86-րդ մասին համապատասխան (տե՛ս ստորեւ՝ 40-րդ պարբերությունը)՝ Ազգային ժողովի՝ Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ որոշման նախագիծը դրվել է քննարկման եւ մերժվել: Խորհրդարանական քննարկումներից հետեւում է, որ նախնական սահմանադրական վերանայման առաջարկը մերժելու հիմնական պատճառներից մեկն այն փաստն էր, որ Սահմանադրական դատարանի ինը դատավորներից յոթը շահերի բախում ունեին: Քննարկումների ընթացքում զեկուցողը եւ նախկինում պաշտոնավարող Արդարադատության նախարարի պաշտոնակատարն անդրադարձ են կատարել Սահմանադրական դատարանի ներկայացուցիչների կողմից արված վերջին հայտարարությանն այն մասին, որ այդ դատարանի կողմից կատարված վերանայման շրջանակը կարող էր տարածվել ամբողջ Սահմանադրության վրա (տե՛ս ստորեւ՝ 55-րդ կետի 69-րդ ենթակետում նշված՝ Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունը)՝ անկախ այն փաստից, որ այդպիսի վերանայումը վերջերս սահմանափակվել է Սահմանադրության անփոփոխելի դրույթների համապատասխանության հարցում վերահսկմամբ (տե՛ս ստորեւ՝ 40-րդ պարբերությունը): Նրանք այնուհետեւ ավելացրել են, որ Սահմանադրական դատարանին չպետք է թույլատրվի խոչընդոտել Ազգային ժողովի կողմից խնդրո առարկա սահմանադրական փոփոխությունների ընդունումը, քանի որ մարդիկ ակնհայտորեն անկախ իրավական համակարգ էին ցանկանում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ազգային ժողովի կանոնակարգի վերաբերյալ Սահմանադրական ակտի 86-րդ մասում ոչինչ չի նշվում այն մասին, թե ինչպիսի ընթացք պետք է տալ այն դեպքում, երբ Սահմանադրական դատարան դիմելու Ազգային ժողովի նախագիծը մերժվում է, Ազգային ժողովի նախագահը եզրակացրել է, որ ըստ էության արգելված չի եղել ընդունել խնդրո առարկա փոփոխությունները երկրորդ

ընթերցմամբ՝ առանց դատարանի կողմից նախնական վերանայման⁸⁹: 2021 թվականի ապրիլի 29-ին Սահմանադրական դատարանը որոշել է, որ Ազգային ժողովի գործողությունները նախնական վերանայման պահանջ ներկայացնելուց հետո չեն հակասել Սահմանադրությանը (տե՛ս ստորել՝ 39-րդ պարբերությունը):

27. Փոփոխություններն ուժի մեջ են մտել 2020 թվականի հունիսի 26-ին: Արդյունքում ավելի քան համապատասխանաբար տասներեք, քսանչորս եւ քսաներկու տարի պաշտոնավարած առաջին, երկրորդ եւ երրորդ դիմումատուների պաշտոնավարման ժամկետները դադարեցվել են: Որպես Սահմանադրական դատարանի նախագահ՝ չորրորդ դիմումատուի պաշտոնավարման ժամկետը նույնպես դադարեցվել է, սակայն նա շարունակել է պաշտոնավարել որպես այդ դատարանի դատավոր:

28. 2020 թվականի սեպտեմբերի 15-ին Սահմանադրական դատարանի երեք նոր դատավորները, իսկ 2022 թվականին Սահմանադրական դատարանի երկու նոր դատավորները նշանակվել են տասներկուամյա չերկարաձգվող ժամկետով՝ նոր ընթացակարգին համապատասխան: 2020 թվականի հոկտեմբերի 12-ին Արման Դիլանյանն իր գործընկերների կողմից ընտրվել է որպես Սահմանադրական դատարանի նախագահ՝ վեցամյա չերկարաձգվող ժամկետով:

⁸ [Ազգային ժողովի՝ 2020 թվականի հունիսի 22-ի արտահերթ նիստը \(առաջին ընթերցում\)](#):

⁹ [Ազգային ժողովի՝ 2020 թվականի հունիսի 22-ի արտահերթ նիստը \(երկրորդ ընթերցում\)](#):

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ

I. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ

Ա. Ինչ վերաբերում է դատավորներին եւ Սահմանադրական դատարանի նախագահին

29. 1995 թվականին ընդունված Սահմանադրությամբ սահմանված էր, որ Սահմանադրական դատարանի հինգ անդամներ նշանակվում էին Ազգային ժողովի կողմից, իսկ չորս անդամներ՝ Հանրապետության նախագահի կողմից: Սահմանադրական դատարանի նախագահը նշանակվում էր Ազգային ժողովի կողմից՝ այդ դատարանի անդամներից: Սահմանադրական դատարանի անդամները եւ նախագահը նշանակվում էին ցմահ պաշտոնավարմամբ, այն է՝ մինչ յոթանասուն տարեկանը նրանց պաշտոնավարումը (տե՛ս Սահմանադրության 96-րդ հոդվածը): Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարանի անդամների պաշտոնավարման դադարեցմանը, կանոնները, ըստ էության, նույնն էին, ինչ այսօր (տե՛ս ստորեւ՝ 33-րդ կետում նշված՝ Սահմանադրության 164-րդ հոդվածի 8-րդ եւ 9-րդ կետերը):

30. Սահմանադրությունը փոփոխվել է 2005 թվականին: Սահմանադրական դատարանի անդամների եւ նախագահի նշանակման կարգն ընդհանուր առմամբ պահպանվել է (Նախագահի նշանակման ընթացակարգի վերաբերյալ տե՛ս Սահմանադրության 83-րդ հոդվածի 2-րդ կետը): Միեւնույն ժամանակ կենսաթոշակային տարիքը նվազեցվել է յոթանասունից վաթսունհինգի՝ Սահմանադրության 96-րդ հոդվածի փոփոխության համաձայն: Նոր կանոնը կիրառելի չէր գործող անդամների նկատմամբ, որոնք պետք է շարունակեին պաշտոնավարումը մինչեւ յոթանասուն տարին լրանալը (Սահմանադրության 117-րդ հոդվածի 13-րդ կետը): Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարանի անդամների պաշտոնավարման դադարեցմանը, կանոնները, ըստ էության, նույնն էին, ինչ այսօր (տե՛ս ստորեւ՝ 33-րդ կետում նշված՝ Սահմանադրության 164-րդ հոդվածի 8-րդ եւ 9-րդ կետերը):

31. 2015 թվականին Սահմանադրական դատարանի դատավորների նշանակումների ընթացակարգում եւ պաշտոնավարման ժամկետների հետ կապված՝ էական փոփոխություններ են կատարվել: Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորներն այժմ պետք է նշանակվեն Ազգային ժողովի կողմից տասներկուամյա չերկարաձգվող ժամկետով՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդի չափով: Երեք դատավոր պետք է նշանակվի Հանրապետության նախագահի առաջարկությամբ, երեք դատավոր՝ Կառավարության առաջարկությամբ, եւ երեք դատավոր՝ Դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ: Դատավորների ընդհանուր ժողովը կարող է առաջադրել միայն դատավորների թեկնածությունը: Իր գործընկերների կողմից նշանակման ենթակա Սահմանադրական դատարանի նախագահի համար սահմանվել է պաշտոնավարման վեցամյա չերկարաձգվող ժամկետ: Նոր կանոններն ուժի մեջ են մտել 2018 թվականի ապրիլի 9-ին:

32. Սահմանադրության 213-րդ հոդվածն ի սկզբանե նախատեսում էր, որ հին կանոնները շարունակելու էին կիրառվել դատավորների եւ Սահմանադրական դատարանի նախագահի նկատմամբ, որոնք նշանակվել էին 2018 թվականի ապրիլի 9-ից առաջ, ինչպես նշված դիմումատուների դեպքում էր: Այդ դրույթը փոփոխության էր ենթարկվել հունիսի 22-ին եւ ուժի մեջ էր մտել 2020 թվականի հունիսի 26-ին, ինչի արդյունքում անմիջապես դադարեցվել է Սահմանադրական դատարանի այն դատավորների պաշտոնավարման ժամկետը, որոնք նշանակվել էին 2018 թվականի ապրիլի 9-ից առաջ, եւ որոնք պաշտոնավարել էին առնվազն տասներկուամյա ընդհանուր ժամկետով: 2018 թվականի ապրիլի 9-ից առաջ նշանակված դատարանի մյուս դատավորները պետք է շարունակեին պաշտոնավարել մինչ տասներկուամյա ժամկետը լրանալը: Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետը նույնպես անմիջապես դադարեցվել էր, իսկ նրա գործընկերների կողմից նոր ընթացակարգին համապատասխան պետք է

ընտրվել նոր նախագահ՝ վեցամյա չերկարաձգվող ժամկետով: Այդ դրույթի հին եւ ընթացիկ տարբերակներն ունեն հետեւյալ բովանդակությունը.

Սահմանադրության 213-րդ հոդված (ուժի մեջ է 2018 թվականի ապրիլի 9-ից մինչ 2020 թվականի հունիսի 26-ը)

«Սահմանադրական դատարանի՝ մինչեւ Սահմանադրության 7-րդ գլուխն ուժի մեջ մտնելը նշանակված նախագահը եւ անդամները շարունակում են պաշտոնավարել մինչեւ իրենց լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը: Սահմանադրության 7-րդ գլուխն ուժի մեջ մտնելուց հետո Սահմանադրական դատարանի դատավորների թափուր հաստիքների համար թեկնածուների առաջադրումը կատարվում է հաջորդաբար Հանրապետության նախագահի, Դատավորների ընդհանուր ժողովի եւ Կառավարության կողմից»:

Սահմանադրության 213-րդ հոդված (ուժի մեջ է 2020 թվականի հունիսի 26-ից)

«1. Մինչեւ Սահմանադրության 7-րդ գլուխն ուժի մեջ մտնելը նշանակված եւ տասներկու տարվանից ոչ պակաս ընդհանուր ժամկետով որպես Սահմանադրական դատարանի անդամ (դատավոր) պաշտոնավարած Սահմանադրական դատարանի անդամի կամ դատավորի լիազորությունները համարվում են դադարեցված, եւ նրա պաշտոնավարումը դադարում է:

2. Մինչեւ Սահմանադրության 7-րդ գլուխն ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի այն անդամը, որի պաշտոնավարումը չի դադարում սույն հոդվածի 1-ին կետի համաձայն, շարունակում է պաշտոնավարել որպես Սահմանադրական դատարանի դատավոր մինչեւ իր պաշտոնավարման տասներկուամյա ժամկետը լրանալը՝ Սահմանադրության 7-րդ գլուխն ուժի մեջ մտնելուց առաջ եւ հետո իր պաշտոնավարման ժամկետի հաշվառմամբ:

3. Սահմանադրության 7-րդ գլուխն ուժի մեջ մտնելուց հետո Սահմանադրական դատարանի դատավորների թափուր հաստիքների համար թեկնածուների առաջադրումը կատարվում է հաջորդաբար՝ Կառավարության, Հանրապետության նախագահի եւ Դատավորների ընդհանուր ժողովի կողմից: Սահմանադրական դատարանի դատավորի թափուր հաստիքների համար թեկնածուների առաջադրումը, ինչի անհրաժեշտությունն առաջացել է սույն հոդվածի 1-ին կետի հիման վրա, կատարվում է հաստիքը թափուր դառնալուց հետո՝ երկու ամսվա ընթացքում:

4. Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետը դադարեցվում է: Այն բանից հետո, երբ Սահմանադրական դատարանի նախագահի հաստիքը թափուր է դառնում, Սահմանադրական դատարանի նոր նախագահն ընտրվում է Սահմանադրության 166-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն Սահմանադրական դատարանի դատավորների հաստիքները համալրելուց հետո, ինչի անհրաժեշտությունն առաջացել է սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան»:

33. Սահմանադրության 164-րդ հոդվածով կարգավորվում է Սահմանադրական դատարանի եւ այլ դատարանների դատավորների կարգավիճակը: Նշված հոդվածն ունի հետեւյալ բովանդակությունը.

«1. Արդարադատություն իրականացնելիս դատավորը պետք է անկախ, անաչառ լինի եւ գործի բացառապես Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան:

2. Դատավորը պատասխանատվություն չի կրում արդարադատություն իրականացնելիս արտահայտված կարծիքների կամ դատական ակտերի համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման տարրեր:

3. Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ իր լիազորությունների կապակցությամբ իրականացվող քրեական հետապնդումը կարող է իրականացվել միայն Սահմանադրական դատարանի համաձայնությամբ: Սահմանադրական դատարանի դատավորը չի կարող զրկվել ազատությունից իր լիազորություններն իրականացնելիս՝ առանց Սահմանադրական դատարանի համաձայնության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նրան կալանավորել են հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելու գործընթացը չի կարող տեւել յոթանասուներկու ժամից ավելի: Սահմանադրական դատարանի նախագահին անմիջապես պետք է ծանուցեն Սահմանադրական դատարանի դատավորին ազատությունից զրկելու մասին:

4. Դատավորի նկատմամբ իր լիազորությունները կատարելու կապակցությամբ իրականացվող քրեական հետապնդումը կարող է իրականացվել բացառապես Բարձրագույն դատական խորհրդի համաձայնությամբ: Դատավորը չի կարող զրկվել ազատությունից իր լիազորություններն իրականացնելիս՝ առանց Բարձրագույն դատական խորհրդի համաձայնության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նրան կալանավորել են հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելու գործընթացը չի կարող տեւել յոթանասուներկու ժամից ավելի: Բարձրագույն դատական խորհրդի նախագահին անմիջապես պետք է ծանուցեն դատավորին ազատությունից զրկելու մասին:

5. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն ու ընթացակարգը սահմանված են Սահմանադրական դատարանի եւ Դատական օրենսգրքի վերաբերյալ սահմանադրական ակտով:

6. Դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված որեւէ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որեւէ պաշտոն՝ առետրային կազմակերպություններում, կամ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կամ կատարել վճարովի այլ աշխատանք՝ բացի գիտական, կրթական եւ ստեղծագործական աշխատանքից: Սահմանադրական դատարանի եւ Դատական օրենսգրքի վերաբերյալ սահմանադրական ակտով կարող են սահմանվել անհամատեղելիության այլ պայմաններ:

7. Դատավորը չի կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ:

8. Դատավորի լիազորությունները դադարում են դրանց ժամկետը լրանալուն պես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու, քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելու, նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքերում, ինչպես նաեւ նրա հրաժարականի կամ մահվան դեպքում:

9. Անհամատեղելիության պայմանների խախտման, քաղաքական գործողությունների մեջ ներգրավվելու, առողջական վիճակի պատճառով պաշտոնավարման անհնարինության կամ էական կարգապահական խախտման դեպքում Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցվում են Սահմանադրական դատարանի որոշմամբ, մինչդեռ դատավորի լիազորությունները դադարեցվում են Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ:

10. Դատավորի համար սահմանվում է նրա բարձր կարգավիճակին եւ պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն: Դատավորի վարձատրության չափը սահմանվում է օրենքով:

11. Դատավորների կարգավիճակի վերաբերյալ մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի եւ Դատական օրենսգրքի վերաբերյալ Սահմանադրական ակտով»:

34. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի երեք հինգերորդով կարող է որոշում կայացնել դիմելու Սահմանադրական դատարան՝ պահանջելով, որ այն դադարեցնի իր դատավորներից մեկի պաշտոնավարման ժամկետը: Սահմանադրական դատարանի վերաբերյալ սահմանադրական ակտի 83-րդ մասի 1-ին կետին համապատասխան¹⁰ Ազգային ժողովը կարող էր իր պահանջը հիմնավորել Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված հիմքերով (տե՛ս վերոնշյալ 33-րդ պարբերությունը):

35. Սահմանադրական դատարանի վերաբերյալ սահմանադրական ակտի 16-րդ մասում նկարագրված է Սահմանադրական դատարանի դատավորի կողմից գործում ներկա գտնվելու «անհնարինության» հարցը: Այդ դրույթի համապատասխան մասն ունի հետեւյալ բովանդակությունը.

«...»

3. Սահմանադրական դատարանի դատավորի կողմից գործին ներկա գտնվելու անհնարինության հարցը կարող է բարձրացվել Սահմանադրական դատարանի դատավորներից յուրաքանչյուրի կողմից:

4. Սահմանադրական դատարանը գործը վարույթ ընդունելու ընթացակարգային որոշման շրջանակներում պետք է որոշում կայացնի Սահմանադրական դատարանի դատավորի կողմից գործին ներկա գտնվելու անհնարինության հարցի շուրջ:

5. Այդ հարցի կապակցությամբ Սահմանադրական դատարանի ընթացակարգային որոշումն ընդունվում է Սահմանադրական դատարանի դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

36. Սահմանադրական ակտի 10-րդ մասի 2-րդ կետին եւ 88-րդ մասի 5.1 կետին համապատասխան՝ կենսաթոշակ է տրամադրվում Սահմանադրական դատարանի այն դատավորներին, որոնց պաշտոնավարման ժամկետը լրացել է 2020 թվականի հունիսի 26-ին (այն է՝ առաջին երեք դիմումատուներին)՝ անկախ նրանց տարիքից: Կենսաթոշակ ստանալու իրավունքը չի դադարում այն դեպքում, երբ նրանք այլ աշխատանքի են անցնում՝ բացառությամբ պետական ծառայողի աշխատանքի:

¹⁰ Նշված ակտն ուժի մեջ է՝ սկսած 2018 թվականի ապրիլի 9-ից:

Բ. Ինչ վերաբերում է սահմանադրական փոփոխություններին

37. Սահմանադրության 203-րդ հոդվածը նախատեսում է, որ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 203-րդ հոդվածները չեն կարող փոփոխության ենթարկվել:

38. Սահմանադրության 202-րդ հոդվածով կարգավորվում է սահմանադրական փոփոխությունների ընդունումը: Նշված հոդվածն ունի հետեւյալ բովանդակությունը.

«1. Սահմանադրությունը, Սահմանադրության 1-3-րդ, 7-րդ, 10-րդ եւ 15-րդ գլուխների փոփոխությունները, եւ 88-րդ հոդվածի փոփոխությունները, 89-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին նախադասությունը, 90-րդ հոդվածի 1-ին կետը, 103-րդ հոդվածի 2-րդ կետը, 108-րդ, 115-րդ, 119-120-րդ, 123-125-րդ, 146-րդ, 149-րդ եւ 155-րդ հոդվածները եւ Սահմանադրության 200-րդ հոդվածի 4-րդ կետն ընդունվում են բացառապես հանրաքվեի միջոցով: Սահմանադրության ընդունումը կամ փոփոխությունը նախաձեռնելու իրավունքը պատկանում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդին, Կառավարությանը կամ ընտրելու իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացիներին: Ազգային ժողովը որոշումն ընդունում է նախագիծը հանրաքվեի դնելուց հետո՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

2. Բացառությամբ սույն հոդվածի 1-ին կետում նշված հոդվածների՝ Սահմանադրության այլ հոդվածների փոփոխություններն ընդունվում են Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Համապատասխան նախաձեռնության նկատմամբ իրավունքը պատկանում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդին, Կառավարությանը կամ ընտրելու իրավունք ունեցող հարյուր հիսուն հազար քաղաքացիներին:

3. Այն դեպքում, երբ Ազգային ժողովին չի հաջողվում ընդունել սահմանադրական փոփոխությունների նախագիծը՝ սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան, այն կարող է դրվել հանրաքվեի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդի կողմից ընդունված որոշմամբ»:

39. Սկսած 2018 թվականի ապրիլի 9-ից՝ սահմանադրական փոփոխությունների բոլոր նախագծերը պետք է ուղարկվեն Սահմանադրական դատարան՝ նախնական սահմանադրական վերանայման նպատակով: Համապատասխան դրույթներն ունեն հետեւյալ բովանդակությունը.

Հոդված 168

«Սահմանադրական դատարանի վերաբերյալ ակտով սահմանված կարգով՝
Սահմանադրական դատարանը

...

2) մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև
հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը որոշում է դրանց
համապատասխանությունը Սահմանադրությանը,

...»:

169-րդ հոդվածի 2-րդ կետ

«Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում
Ազգային ժողովը դիմում է Սահմանադրական դատարանին Սահմանադրության
փոփոխությունների մասով ...»:

Սահմանադրական դատարանը որոշել է, որ նշված վերանայումը
սկզբունքորեն պարտադիր է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ
փոփոխությունների նախագիծը վերաբերում է տվյալ դատարանի դատավորների
մեծամասնության իրավունքներին եւ ուղղակի իրավական հետեւանքներ չի
առաջացնում որեւէ այլ անձի համար (2021 թվականի ապրիլի 29-ի SDV-1590
որոշում¹¹ 5.8-րդ կետեր): Սահմանադրական դատարանի կարծիքով՝ այդպիսի
հանգամանքներում բոլոր նշված դատավորները ստիպված կլինեն ինքնաբացարկ
հայտնել՝ դատարանին թողնելով առանց քվորման (ինչ վերաբերում է քվորմանը,
տե՛ս ստորել՝ 41-րդ կետը):

40. Ազգային ժողովի կանոնակարգի վերաբերյալ սահմանադրական ակտի
86-րդ մասն առավել մանրամասն կարգավորում է սահմանադրական
փոփոխությունների ընդունման ընթացակարգը: Այն ուժի մեջ է մտել
2018 թվականի ապրիլի 9-ին (այդ ակտի 166-րդ մասի 1-ին կետին
համապատասխան): 2020 թվականի հունիսի 3-ին ընդունված նշված ակտի

¹¹ Որոշումն ընդունվել է ձայների՝ 5-4 մեծամասնությամբ. 2018 թվականի ապրիլի 9-ից առաջ
նշանակված բոլոր դատավորները քվեարկել են դրա դեմ:

փոփոխության համաձայն՝ Սահմանադրական դատարանի կողմից վերանայման շրջանակը սահմանափակված էր Սահմանադրության անփոփոխելի դրույթների համապատասխանության հարցում վերահսկմամբ: Ինդրո առարկա փոփոխությունն ուժի մեջ է մտել 2020 թվականի հունիսի 25-ին: Այդ դրույթի ներկայիս տարբերակն ունի հետևյալ բովանդակությունը.

«1. Սահմանադրական փոփոխությունների նախագիծը քննարկվում է Ազգային ժողովում՝ երկու ընթերցմամբ՝ Կանոնակարգի 16-17-րդ գլուխներին համապատասխան՝ օրենքի նախագծերի համար սահմանված կարգով:

2. Սահմանադրական փոփոխություններն ամբողջությամբ երկրորդ ընթերցմամբ ընդունելուց առաջ քվեարկության է դրվում սահմանադրական փոփոխությունների համար Սահմանադրական դատարան դիմելու՝ Ազգային ժողովի որոշման նախագիծը: Որոշումն ընդունվելու դեպքում Ազգային ժողովի նախագահը երկու աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում է այդ որոշումը եւ այն ուղարկում Սահմանադրական դատարան երկրորդ ընթերցմամբ քննարկված՝ Սահմանադրության փոփոխության նախագծի հետ միասին՝ գնահատելու համար նախագծի սահմանադրականությունը Սահմանադրության անփոփոխելի հոդվածների համապատասխանության տեսանկյունից: Հարցի քննարկումն ընդհատվում է մինչեւ Սահմանադրական դատարանի որոշումը ստանալը:

3. Այն դեպքում, երբ սահմանադրական փոփոխությունների նախագծի՝ Սահմանադրության՝ փոփոխման ոչ ենթակա հոդվածներին համապատասխանության տեսանկյունից սահմանադրականության գնահատում իրականացնելիս Սահմանադրական դատարանը հայտնում է, որ նախագիծը չի համապատասխանում Սահմանադրությանը, նախագիծը դուրս է բերվում շրջանառությունից:

4. Այն դեպքում, երբ սահմանադրական փոփոխությունների նախագծի սահմանադրականությունը Սահմանադրության՝ անփոփոխելի հոդվածներին համապատասխանության տեսանկյունից գնահատելիս Սահմանադրական դատարանը նախագիծը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող, որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տվյալ հարցի շուրջ քվեարկությունն անցկացվում է Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստին՝ ըստ հետևյալ ընթացակարգի.

1) Կանոնակարգի 84-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքում [ինչը վերաբերում է Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին կետին] քվեարկության է դրվում սահմանադրական փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշման նախագիծը, որն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

2) Կանոնակարգի 84-րդ մասի 4-րդ կետով սահմանված դեպքում [ինչը վերաբերում է Սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ կետին] քվեարկության է դրվում սահմանադրական փոփոխությունների նախագիծը, որն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

5. Այն դեպքում, երբ սույն մասի 4-րդ պարբերության 2-րդ կետում նշված սահմանադրական փոփոխությունների նախագիծը չի ընդունվում, հիմնական զեկուցողը կարող է հայտարարություն անել առավելագույնը քսան րոպե տեւողությամբ՝ ներկայացնելով նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշման նախագիծը: Հիմնական զեկուցողի կողմից արված հայտարարությունից հետո խմբակցությունների ներկայացուցիչները կարող են հայտարարություններ անել առավելագույնը տասը րոպե տեւողությամբ, ինչից հետո որոշման նախագիծը քվեարկության է դրվում: Որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Այն դեպքում, երբ որոշումը չի ընդունվում, նախագիծը հանվում է շրջանառությունից:

6. Ազգային ժողովի նախագահը մեկ շաբաթվա ընթացքում Հանրապետության նախագահին է ներկայացնում սահմանադրական փոփոխությունների նախագիծը համապատասխան նախագծի հետ միասին հանրաքվեի դնելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշումը: Նախագահը հանրաքվե է նշանակում նշված փաստաթղթերն ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում:

7. Ազգային ժողովի նախագահը հրապարակում է Ազգային ժողովի կողմից ընդունված սահմանադրական փոփոխությունները մեկ շաբաթվա ընթացքում:

41. Սահմանադրական դատարանի վերաբերյալ Սահմանադրական ակտի 62-րդ մասի 4-րդ կետով նախատեսված է, որ դատարանը սահմանադրական փոփոխությունների նախագծի սահմանադրականության վերաբերյալ որոշումները կայացնում է դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Գ. Ինչ վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդին

42. Բարձրագույն դատական խորհուրդն անկախ մարմին է, որը երաշխավորում է սովորական դատարանների (այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի)

Եւ այդ դատավորների անկախությունը: Այն ստեղծվել է 2018 թվականին՝ Սահմանադրության 173-րդ հոդվածի հիման վրա: Համաձայն Սահմանադրության 174-րդ հոդվածի՝ Բարձրագույն դատական խորհուրդն ունի տասն անդամներ, որոնք նշանակվում են հինգ տարի չերկարաձգվող ժամկետով. հինգ անդամ նշանակվում են Դատավորների ընդհանուր ժողովի կողմից՝ այն դատավորների ցանկից, որոնք որպես դատավոր ունեն առնվազն տասը տարվա փորձ, եւ տասն անդամներ նշանակվում են Ազգային ժողովի կողմից՝ առնվազն տասնհինգ տարվա փորձով ականավոր իրավաբանների ցանկից: Խորհրդի նախագահն ընտրվում է իր գործընկերների կողմից՝ հաջորդաբար այն անդամների ցանկից, որոնք նշանակվում են Դատավորների ընդհանուր ժողովի կողմից, ինչպես նաեւ այն անդամների ցանկից, որոնք նշանակվում են Ազգային ժողովի կողմից:

II. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Ա. Ինչ վերաբերում է նշանակման ժամանակահատվածին

43. 2010 թվականի մարտի 12-ին եւ 13-ին 82-րդ լիազումար նիստին (CDL-AD(2010)004) ընդունված՝ Դատական համակարգի անկախության մասին զեկույցի I մասում նշված Դատավորների անկախության սկզբունքին համապատասխան՝ Վենետիկի հանձնաժողովը եկել է հետեւյալ եզրակացության.

«34. ԵԴԻԽԻ-ի¹² թիվ 1 եզրակացության մեջ (48-րդ կետ) ավելացված է. «Եվրոպական գործելակերպն ընդհանուր առմամբ միտված է կատարելու ամբողջ դրույքով նշանակումներ մինչեւ օրինական կենսաթոշակային տարիքը լրանալը: Սա անկախության տեսանկյունից ամենաքիչ խնդրահարույց մոտեցումն է»: ...

35. Սա համապատասխանում է Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշմանը, որը, բացառությամբ որոշակի դեպքերի, ինչպես Սահմանադրական դատարանի դատավորների դեպքում, մշտապես հավանություն է տվել պաշտոնավարմանը՝ մինչեւ կենսաթոշակի անցնելը»:

¹² Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ

Բ. Ինչ վերաբերում է պաշտոնավարման անվտանգությանը

1. Միավորված ազգերի կազմակերպությունը

44. Դատական համակարգի անկախության հիմնական սկզբունքների համապատասխան մասերն ունեն հետեւյալ բովանդակությունը¹³.

«12. Թե՛ նշանակված, թե՛ ընտրված դատավորների համար պետք է երաշխավորվի պաշտոնավարումը՝ մինչեւ պարտադիր կենսաթոշակային տարիքը լրանալը կամ պաշտոնավարման ժամկետը լրանալը՝ նման ժամկետի առկայության դեպքում:

...

20. Կարգապահական, կասեցման կամ հեռացման ընթացակարգերը ենթակա են անկախ վերանայման: Այս սկզբունքը չի կարող կիրառելի լինել վերին ատյանի դատարանի որոշումների, ինչպես նաեւ իմպիչմենտի կամ նմանատիպ ընթացակարգերի վերաբերյալ՝ օրենսդրությամբ սահմանված որոշումների նկատմամբ»:

45. «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (դատարանների եւ տրիբունալների առջեւ հավասարության եւ արդար դատաքննության իրավունք) 14-րդ հոդվածի վերաբերյալ 2007 թվականի օգոստոսի 23-ին հրապարակված թիվ 32 Ընդհանուր մեկնաբանությունում Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների կոմիտեն արել է հետեւյալ հայտարարությունը (առանց ծանոթագրությունների).

«20. Դատավորները կարող են պաշտոնանկ արվել ոչ պատշաճ վարքագծի կամ ոչ կոմպետենտության լուրջ պատճառների կապակցությամբ՝ սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված՝ օբյեկտիվությունը եւ անաչառությունն ապահովող արդար ընթացակարգերին համապատասխան: Գործադիր կողմից դատավորների պաշտոնանկությունը, օրինակ՝ այն ժամկետը լրանալուց առաջ, որով նրանք նշանակվել են, առանց որեւէ պատճառ ներկայացնելու եւ առանց պաշտոնանկությունը վիճարկելու համար

¹³ Ընդունված Հանցագործությունների կանխմանը եւ իրավախախտների հետ վարվելաձեւին նվիրված՝ Միավորված ազգերի կազմակերպության 7-րդ կոնգրեսի կողմից, որը տեղի է ունեցել 1985 թվականին: Դրանց հավանություն է տրվել Միավորված ազգերի կազմակերպության ընդհանուր ժողովի՝ 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/32 եւ 1985 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 40/146 որոշումներով:

իրենց հասանելի արդյունավետ դատական պաշտպանության միջոցների՝ անհամատեղելի է դատական համակարգի անկախության հետ: Նույնը կիրառելի է, օրինակ՝ գործադիր կողմից ենթադրաբար կոռումպացված դատավորների պաշտոնանկության նկատմամբ՝ առանց օրենքով նախատեսված ընթացակարգերից որեւէ մեկին հետեւելու»:

2. Եվրոպայի խորհուրդը

46. Դատավորների կանոնադրության մասին եվրոպական խարտիայի համապատասխան մասն¹⁴ ունի հետեւյալ բովանդակությունը.

«1.1. Դատավորների կանոնադրության մասին եվրոպական խարտիայի նպատակն է ապահովել այն իրավասությունը, անկախությունն ու անաչառությունը, որն ամեն անհատ օրինականորեն ակնկալում է դատարաններից եւ յուրաքանչյուր դատավորից, որին վստահված է իր իրավունքների պաշտպանությունը: Այն բացառում է ամեն դրույթ եւ ամեն ընթացակարգ, որը կարող է խաթարել վստահությունն այդպիսի իրավասության, անկախության եւ անաչառության նկատմամբ ...

...

1.3. Դատավորի ընտրության, հավաքագրման, նշանակման, կարիերայի առաջընթացի կամ պաշտոնավարման դադարեցման վրա ազդող ցանկացած որոշման մասով կանոնադրությունը նախատեսում է գործադիր եւ օրենսդիր իշխանություններից անկախ մարմնի միջամտությունը, որի շրջանակներում դատավորի պաշտոնը զբաղեցրած անձանց առնվազն կեսն ընտրվում են իրենց գործընկերների կողմից՝ համաձայն այն մեթոդների, որոնք երաշխավորում են դատական իշխանության առավել ընդգրկուն ներկայացվածությունը:

1.4. Կանոնադրությունը յուրաքանչյուր դատավորի համար, որը համարում է, որ կանոնադրությամբ սահմանված իր իրավունքները կամ ընդհանուր առմամբ իր անկախությունը կամ իրավական գործընթացի անկախությունը սպառնալիքի տակ կամ

¹⁴ Ընդունված 1998 թվականի հուլիսի 8-10-ն ընկած ժամանակահատվածում Ստրասբուրգում կայացած հանդիպմանը եվրոպական երկրներից եւ դատավորների երկու միջազգային ընկերակցություններից ժամանած մասնակիցների կողմից (կազմակերպված Եվրոպայի խորհրդի հովանու ներքո): Խարտիան հավանության է արժանացել 1998 թվականի հոկտեմբերի 12-14-ն ընկած ժամանակահատվածում Կիեւում կենտրոնական եւ արեւելյան եվրոպական երկրների գերագույն դատարանների նախագահների հանդիպումից հետո, ինչպես նաեւ 1999 թվականի ապրիլի 8-10-ն ընկած ժամանակահատվածում Լիսաբոնում անցկացված՝ քսանհինգ եվրոպական երկրների արդարադատության նախարարությունների ներկայացուցիչների հանդիպումից հետո:

որեւէ կերպ անտեսված են, նախատեսում է այդպիսի անկախ մարմնին դիմելու հնարավորություն՝ այդ գործընթացի համար հասանելի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներով կամ իրավական պաշտպանության միջոցներ առաջարկելով:

...

5.1. Դատավորի կողմից Կանոնադրությամբ հստակ սահմանված պարտականություններից մեկի կատարման թերացումը կարող է սանկցիա առաջացնել միայն կողմերի լիարժեք լսումն ապահովող վարույթի շրջանակներում, որում դատավորը, որի դեմ առկա է վարույթը, ունի ներկայացված լինելու իրավունք այնպիսի որոշման հիման վրա, որն ընդունվել է այնպիսի տրիբունալի կամ մարմնի առաջարկությամբ, խորհրդով կամ համաձայնությամբ, որի անդամների առնվազն կեսն ընտրված դատավորներ են: Կիրառելի սանկցիաների չափը սահմանված է Կանոնադրությամբ, եւ դրանց կիրառությունը հիմնված է համաչափության սկզբունքի վրա: Գործադիր մարմնի, տրիբունալի կամ սանկցիա նշանակող մարմնի որոշումը սահմանված կարգով ենթակա է բողոքարկման ավելի բարձր դատական ատյանում:

...

7.1. Դատավորն ընդմիջտ դադարում է պաշտոնավարումը հրաժարական ներկայացնելու, ֆիզիկական անբավարարության մասին բժշկական հավաստագրի, տարիքային շեմը լրանալու, իրավաբանորեն ֆիքսված ժամկետը լրանալու կամ սույն փաստաթղթի 5.1 կետով սահմանված ընթացակարգի շրջանակներում ներկայացված պաշտոնանկության դեպքերում:

7.2. Բացառությամբ տարիքային շեմը կամ պաշտոնավարման ֆիքսված ժամկետը լրանալու դեպքերի՝ սույն փաստաթղթի 7.1 կետով սահմանված պատճառներից մեկի առկայությունը պետք է հաստատվի սույն փաստաթղթի 1.3 կետում նշված մարմնի կողմից»:

47. Դատավորների կանոնադրության մասին եվրոպական խարտիայի բացատրական հուշագրի համապատասխան մասն ունի հետեւյալ բովանդակությունը.

«1. ... Խարտիայի դրույթները վերաբերում են բոլոր այն մասնագիտացված դատարանների դատավորների կանոնադրությանը, որտեղ մարդկանց կոչ է արվում ներկայացնել իրենց գործը, կամ որոնք միտված են գործով որոշում կայացնելու քաղաքացիական, քրեական, վարչական կամ այլ ընդդատության շրջանակներում:

...

1.3. Խարտիան նախատեսում է գործադիր եւ օրենսդիր մարմիններից անկախ մարմնի միջամտությունը, որտեղ դատավորների ընտրության, հավաքագրման կամ նշանակման, նրանց կարիերայի աճի կամ պաշտոնավարման դադարեցման վերաբերյալ պետք է առկա լինի որոշում:

Սույն դրույթի բովանդակությունը կիրառելի է տարբեր իրավիճակների նկատմամբ՝ գործադիր կամ օրենսդիր մարմինների համար խորհրդատվության տրամադրումից մինչեւ անկախ մարմնի կողմից իրական որոշումներ կայացնելը:

Այս առումով անհրաժեշտ է հաշվի առնել ներպետական համակարգերի տարբերությունները: Որոշ երկրներում անկախ մարմնի կողմից նշանակումների համար պատասխանատու քաղաքական մարմնի փոխարինումը կարող էր դժվարությամբ ընդունվել: Այնուամենայնիվ, այդպիսի դեպքերում անկախ մարմնի նույնիսկ մեկ խորհուրդը կամ կարծիքը ստանալու պահանջը նշանակումներ կատարող պաշտոնական մարմնի համար մեծ խթան է, եթե ոչ իրական պարտավորություն: Խարտիայի էությունից բխում է, որ անկախ մարմնի խորհուրդները եւ կարծիքները չեն երաշխավորում ընդհանուր առմամբ գործնականում դրանց պահպանումը: Քաղաքական կամ վարչական մարմինը, որը չի հետեւում այդ խորհրդին կամ կարծիքին, առնվազն պարտավոր է նշել մերժման պատճառը:

Խարտիայի սույն դրույթի բովանդակության հիման վրա անկախ մարմինը կարող է նաեւ միջամտել՝ ներկայացնելով ուղղակի կարծիք, պաշտոնական կարծիք, խորհուրդ, առաջարկ կամ փաստացի կայացված որոշում:

Հարց է բարձրացվել անկախ մարմնի անդամակցության կապակցությամբ: Այս առումով Խարտիան սահմանում է, որ մարմնի անդամների առնվազն կեսը պետք է բաղկացած լինի իրենց գործընկերների կողմից ընտրված դատավորներից, ինչը նշանակում է, որ այն չի ցանկանում, որ անկախ մարմնի դատավորները լինեն փոքրամասնություն, ինչպես նաեւ չի պահանջում, որ նրանք լինեն մեծամասնություն: Հաշվի առնելով եվրոպական երկրների մի շարք փիլիսոփայական հայեցակարգեր եւ բանավեճեր՝ մատնանշվել են դատավորներ նվազագույնը 50%-ի չափով, որոնք ունակ են ապահովելու երաշխիքների բավականին բարձր մակարդակ՝ միեւնույն ժամանակ հարգելով տարբեր ներպետական համակարգերում գերիշխող սկզբունքային ցանկացած այլ նկատառում:

Խարտիայում նշված է, որ այն դատավորները, որոնք անկախ մարմնի անդամ են, պետք է ընտրվեն իրենց գործընկերների կողմից այն հիմքով, որ նշված մարմնի անհրաժեշտ անկախությունը բացառում է գործադիրին կամ օրենսդիրին պատկանող քաղաքական իշխանության կողմից դրա անդամների ընտրությունը կամ նշանակումը:

Այդպիսի ընթացակարգով դատավորների նշանակումը եւ դերը կուսակցական-քաղաքական կողմնակալության վտանգ է ենթադրում: Ակնկալվում է, որ անկախ մարմնի կազմում ընդգրկված դատավորները խուսափելու են այն քաղաքական կուսակցությունների կամ մարմինների հավանությանն արժանանալու ձգտումից, որոնք ինքնին նշանակվում կամ ընտրվում են այդպիսի կուսակցությունների կողմից:

Ի վերջո, առանց պահանջելու քվեարկության որեւէ համակարգ՝ Խարտիան նշում է, որ նշված մարմնի համար դատավորների ընտրության մեթոդը պետք է երաշխավորի դատավորների ամենամեծ ներկայացվածությունը:

1.4. Խարտիայով ամրագրվում է ցանկացած այնպիսի դատավորի «բողոքարկման իրավունքը», որը համարում է, որ կանոնադրությամբ իր իրավունքները կամ ընդհանուր առմամբ անկախությունը կամ իրավական գործընթացի անկախությունը որեւէ կերպ վտանգված կամ խախտված է, եւ որ տվյալ դատավորը կարող է գործն ուղարկել անկախ մարմին՝ վերելու ներկայացված կարգով:

Սա նշանակում է, որ դատավորները պաշտպան վիճակում չեն լինի իրենց անկախության իրավունքի խախտման դեպքում: Բողոքարկման իրավունքն անհրաժեշտ երաշխիք է, քանի որ դատական համակարգը պաշտպանող սկզբունքների սահմանումը ցանկալին որպես իրականություն ընդունելու փորձ կարելի է համարել այն դեպքում, երբ մշտապես առկա չեն մեխանիզմներ՝ դրանց արդյունավետ իրականացման համար: Դատավորի անհատական կարգավիճակի վերաբերյալ ցանկացած որոշում կայացնելուց առաջ անկախ մարմնի միջամտությունը պարտադիր կերպով չի վերաբերում բոլոր հնարավոր իրավիճակներին, որոնց առկայության դեպքում վտանգի է ենթարկվում դատավորի անկախությունը, եւ կարելու է ապահովել, որ դատավորները կարողանան դիմել նշված մարմին իրենց նախաձեռնությամբ:

Խարտիան նախատեսում է, որ այն մարմինը, որին դիմել են, պետք է իրավասություն ունենա իր համաձայնությամբ իրավական պաշտպանության միջոցներ տրամադրելու դատավորի անկախության վրա ազդող իրավիճակի լուծման համար կամ առաջարկելու, որ իրավական պաշտպանության միջոցները տրամադրվեն իրավասու մարմնի կողմից: Սույն բանաձեռով հաշվի է առնվում ներպետական համակարգերի բազմազանությունը, եւ անկախ մարմնի կողմից տվյալ իրավիճակի վերաբերյալ նույնիսկ ուղղակի խորհուրդը կարելու խթան է, որ տվյալ մարմինը բողոքարկվող իրավիճակը կարգավորելու նպատակով իրավական պաշտպանության միջոցներ տրամադրի:

...

5.1. Խարտիան շոշափում է դատավորի կարգապահական պատասխանատվության հարցը: Այն սկսվում է կարգապահական սանկցիաների օրինականության սկզբունքի վկայակոչմամբ՝ սահմանելով, որ սանկցիաների կիրառման միակ հիմնավոր պատճառը Դատավորների կանոնադրությամբ ուղղակիորեն սահմանված պարտականություններից մեկի չկատարումն է, եւ որ կիրառելի սանկցիաների սանդղակը պետք է սահմանված լինի Դատավորների կանոնադրությամբ: Ավելին, Խարտիան ստեղծում է երաշխիքներ կարգապահական լուծման վերաբերյալ. կարգապահական սանկցիաները կարող են կիրառվել տրիբունալի կամ մարմնի առաջարկով կամ խորհրդով կամ համաձայնությամբ կայացված որոշման հիման վրա, որի անդամների առնվազն կեսը պետք է լինեն ընտրված դատավորներ: Դատավորը պետք է լիարժեք լաված լինելու հնարավորություն եւ ներկայացվածություն ունենա: Եթե այս սանկցիան փաստացի կիրառվի, այն պետք է ընտրվի սանկցիաների սանդղակից՝ հաշվի առնելով համաչափության սկզբունքը: Ի վերջո, Խարտիան ավելի բարձր դատական ատյանում բողոքարկման իրավունք է նախատեսում սանկցիան կիրառելու ցանկացած որոշման դեմ, որը կայացվել է գործադիր իշխանության, տրիբունալի կամ մարմնի կողմից, որի անդամների առնվազն կեսն ընտրված դատավորներ են:

Սույն դրույթի ներկայիս բովանդակությունը չի պահանջում Խորհրդարանի կողմից կիրառվող սանկցիայի դեմ բողոքարկման իրավունքի հասանելիություն:

...

7.1. Անհրաժեշտ է զգոն լինել այն պայմանների նկատմամբ, որոնց առկայության դեպքում դադարում է դատավորների աշխատանքային գործունեությունը: Անհրաժեշտ է ստեղծել աշխատանքային գործունեության դադարեցման պատճառների սպառիչ ցանկ: Այդ պատճառներից է դատավորի կողմից հրաժարական ներկայացնելու, հետագա դատական ծառայության համար ֆիզիկական անբավարարության վերաբերյալ բժշկական հավաստագիր ունենալու, տարիքային շեմը լրանալու, պաշտոնավարման ֆիքսված ժամկետը լրանալու կամ կարգապահական պատասխանատվության համատեքստում պաշտոնանկության դեպքերը:

7.2. Աշխատանքային գործունեության դադարեցման համար հիմք հանդիսացող հանգամանքները, բացառությամբ այն իրադարձությունների, որոնք կարող են հաստատվել առանց որեւէ դժվարության, այն է՝ տարիքային շեմը կամ պաշտոնավարման ֆիքսված ժամկետը լրանալը, կարող են վավերացվել 1.3 պարբերությունում նշված մարմնի կողմից: Այս պայմանը կարող է հեշտությամբ իրականացվել այն դեպքում, երբ պաշտոնավարման դադարեցման պատճառը պաշտոնանկությունն է հենց այս մարմնի կողմից կայացված որոշմամբ կամ առաջարկությամբ կամ խորհրդով կամ էլ համաձայնությամբ:

48. 2010 թվականի նոյեմբերի 17-ին ընդունված «Դատավորների անկախության, արդյունավետության եւ պարտականությունների մասին» անդամ պետություններին ուղղված՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)12 հանձնարարականի հավելվածի համապատասխան քաղվածքներն ունեն հետեւյալ բովանդակությունը.

«1. Սույն հանձնարարականը կիրառելի է դատական գործառույթներ իրականացնող բոլոր անձանց նկատմամբ, այդ թվում՝ այն անձանց նկատմամբ, որոնք զբաղվում են սահմանադրական գործերով:

...

8. Այն դեպքում, երբ դատավորները համարում են, որ իրենց անկախությունը սպառնալիքի տակ է, նրանք պետք է հետպահանջով դատական իշխանության խորհուրդ կամ այլ անկախ մարմին դիմելու հնարավորություն ունենան կամ պետք է իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ունենան:

...

49. Պաշտոնավարման անվտանգությունը եւ անփոփոխելիությունը դատավորների անկախության հիմնական բաղադրիչներն են: Հետեւաբար դատավորների պաշտոնավարումը պետք է երաշխավորված լինի մինչեւ կենսաթոշակային պարտադիր տարիքը լրանալը՝ դրա առկայության դեպքում»:

49. Վերոնշյալ CM/Rec(2010)12 հանձնարարականի բացատրական հուշագրի համապատասխան քաղվածքներն ունեն հետեւյալ բովանդակությունը.

«13. Իշխանությունների տարանջատումն անկախության հիմնարար երաշխիք է՝ անկախ անդամ երկրների իրավական ավանդույթներից:

...

15. Եթե դատական համակարգի խորհուրդն օրենսդիր կամ գործադիր իշխանությունների մակարդակով սահմանադրական մարմին է կամ այն դեպքում, երբ մեկ այլ անկախ մարմին նման իրավասություն ունի, խորհրդի կամ մարմնի կողմից արված հայտարարությունը սովորաբար բավարար է առանձին դատավորի անկախությունը պաշտպանելու համար: Այլ դեպքերում դատավորի անկախությունը կարող է երաշխավորվել ավելի բարձր ատյանի դատարանների կամ այլ մարմնի միջոցով, օրինակ՝ դատարանի նախագահին ներկայացվող իրավական պաշտպանության միջոցներով՝ իրավասություն

ունենալով պաշտպանել դատական իշխանության անկախությունը ցանկացած տեսակի արտաքին միջամտությունից, որոնք ակնհայտորեն իրականացվում են պետության այլ մարմինների կողմից (տե՛ս հանձնարարականի 8-րդ կետը)»:

Գ. Ինչ վերաբերում է դատավորների անաչառությանը եւ անհրաժեշտության դոկտրինին

1. Միավորված ազգերի կազմակերպությունը

50. Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքների համապատասխան մասն¹⁵ ունի հետեւյալ բովանդակությունը.

«2.5. Դատավորը ինքնաբացարկ է հայտնում այնպիսի վարույթում մասնակցությունից, որտեղ դատավորը չի կարող գործը վճռել անաչառ կերպով կամ որտեղ ողջամիտ դիտորդը կարող է կարծել, թե դատավորը չի կարող գործը վճռել անաչառ կերպով: ...

...

ընդ որում, դատավորի ինքնաբացարկը չի պահանջվում, եթե որեւէ այլ տրիբունալ չունի գործը քննելու համար անհրաժեշտ կազմը, կամ եթե հրատապ հանգամանքներով պայմանավորված՝ որեւէ գործողություն չձեռնարկելը կարող է արդարադատության իրականացման ձախողման պատճառ դառնալ»:

51. 2007 թվականի մարտին Դատական համակարգում բարեվարքությունն ամրապնդելու հարցերով դատական խումբն ընդունել է Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքների վերաբերյալ պարզաբանումները: Դրա համապատասխան մասն ունի հետեւյալ բովանդակությունը.

¹⁵ Փաստաթուղթն ընդունվել էր 2001 թվականին Դատական բարեվարքությունն ամրապնդելու հարցերով դատական խմբի կողմից Միավորված ազգերի կազմակերպության թմրամիջոցների եւ հանցագործության դեմ պայքարի գրասենյակի հովանու ներքո եւ վերանայվել 2002 թվականին (տե՛ս E/CN.4/2003/65 հավելվածը): 2006 թվականին Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական եւ սոցիալական խորհուրդն ընդունել է թիվ 2006/23 որոշումը՝ նշելով, որ Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքներն ապահովում էին հետագա զարգացումը եւ լրացնում էին դատական համակարգի անկախության հիմնարար սկզբունքները եւ հրավիրում էին անդամ երկրներին խրախուսելու իրենց դատական իշխանություններին՝ դատական իշխանության անդամների մասնագիտական եւ էթիկական վարքագծի մասով կանոնները վերանայելիս եւ մշակելիս հաշվի առնել Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքները:

«Որեւէ մեկը չի կարող լինել իր սեփական գործով դատավոր»:

78. Հիմնարար սկզբունքն այն է, որ որեւէ մեկը չի կարող լինել իր սեփական գործով դատավոր: ... այն դեպքում, երբ դատավորը դատավարության մաս է կազմում կամ գործի ելքի հետ կապված տնտեսական շահ ունի, նա իսկապես մասնակցում է գործին՝ որպես իր սեփական գործով դատավոր: Սա բավարար հիմք է ինքնաբացարկի համար: ...

...

Անհրաժեշտության դոկտրինը

100. Արտակարգ հանգամանքներում հնարավոր է պահանջվի շեղվել վերոնշյալ սկզբունքից: Անհրաժեշտության դոկտրինն ինքնաբացարկ հայտնած դատավորին հնարավորություն է տալիս քննել եւ վճռել գործն այն դեպքում, երբ դա չանելը կարող է հանգեցնել անարդարության դրսեւորման: Դա կարող է տեղի ունենալ այն դեպքում, երբ հասանելի չէ որեւէ այլ դատավոր, որը նմանապես ինքնաբացարկ հայտնած չլինի, կամ այն դեպքում, երբ գործի քննությունը հետաձգելը կամ ոչ ճիշտ քննությունը կարող է լուրջ դժվարության հանգեցնել, կամ այն դեպքում, երբ դատավորի բացակայության պատճառով դատարանը չունի գործը տեղում լսելու եւ վճռելու համար անհրաժեշտ կազմ: Անշուշտ, նման դեպքերը կլինեն հազվագյուտ հանդիպող եւ հատուկ: Այնուամենայնիվ, դրանք կարող են ժամանակ առ ժամանակ առաջ գալ բարձր ատյանի դատարաններում, որոնք ունեն քիչ թվով դատավորներ, եւ կարելի է սահմանադրական եւ վերաքննիչ գործառույթները չեն կարող պատվիրակվել այլ դատավորների»:

2. Եվրոպայի խորհուրդը

52. Վենետիկի հանձնաժողովը 2016 թվականի դեկտեմբերին կայացած 109-րդ լիազումար (CDL-AD(2016)036) նիստում ընդունված՝ «Ալբանիայում դատավորների եւ դատախազների անցումային վերագնահատման մասին» օրենքի վերաբերյալ իր *amicus curiae* ամփոփագրում կայացրել է հետեւյալ որոշումը.

«...

20. Այն դեպքում, երբ դատարանին դիմել են այնպիսի գործով որոշում կայացնելու խնդրանքով, որում դատարանի որոշ անդամներ կարող են հետապնդել կամ ենթադրաբար կարող են հետապնդել որեւէ շահ, տվյալ դատարանն ազատված չէ գործը քննելու իր

պարտավորությունից՝ պայմանավորված այդպիսի շահի առկայությամբ: Սահմանադրական դատարանը պարտավոր է քննել վիճարկվող յուրաքանչյուր օրենքի սահմանադրականությունը: Այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը թույլ է տալիս այնպիսի իրավիճակի առաջացում, որտեղ Դատարանին արգելվում է քննություն իրականացնել օրենքով սահմանված կարգով իր անդամներից մեկի կամ մի քանիսի՝ հակառակ եզրակացության սուբյեկտ լինելու հավանականությունից բխող ինքնաբացարկների պատճառով, Դատարանի կողմից որոշում կայացնելու այդ պարտավորությունը կարող է նաեւ չիրականացվել:

21. 2002 թվականի Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքներով նախատեսված է, որ կարող է առաջանալ նման իրավիճակ եւ կանխատեսվել նման հավանականություն: ...

22. Սա մասնավորապես այն դեպքն է, երբ սահմանադրական իրավագործությամբ օժտված միայն մեկ դատարան է գործում, եւ (կամ) դատավորների թիվը սահմանափակ է, ինչպես նաեւ այն դեպքում, երբ ինքնաբացարկը փաստացի կարող է արդարադատության մերժման պատճառ դառնալ:

23. Իրականում այնքան էլ դժվար չէ կանխատեսել այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում կարող է նման խնդիր առաջանալ: Հարկային միջոցների հետ կապված խնդիրները, օրինակ՝ կարող են հետեւանքներ առաջացնել յուրաքանչյուր առանձին դատավորի հարկային պարտավորության համար: Այդպիսի իրավիճակ է առաջացել Իռլանդիայի՝ Օ'Բայրն ընդդեմ ֆինանսների նախարարի գործով, որտեղ գործ է հարուցվել դատավորի այրիի կողմից, որը ձգտում էր եզրակացություն ստանալ այն մասին, որ դատավորների եկամտային հարկից պահումները հանգեցնում էին դատական վարձատրության հակասահմանադրական նվազեցման: Բարձր դատարանում Դիքսոն Զ-ն վկայակոչել է Միացյալ Նահանգների գերագույն դատարանի կողմից նախկինում արված եզրահանգումն այն մասին, որ «իրավագործության շրջանակը չէր կարող մերժվել կամ հետ կանչվել տվյալ հարցի նկատմամբ դատարանի անդամների անհատական փոխկապակցվածության պատճառով այն դեպքում, երբ հայցվորն օրենքով իրավասու է դիմել արդարադատությանը, եւ առկա չէ որեւէ այլ տրիբունալ, որտեղ այդպիսի գործով կարելի էր դիմել օրենքով սահմանված կարգով»:

24. Նմանատիպ իրավիճակ կարող է ստեղծվել այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանի վարույթները կարգավորող իրավական նորմերի սահմանադրականությունը, Սահմանադրական դատարանում պաշտոնավարողների նկատմամբ պահանջները, հրաժարականի կամ կարգապահական վարույթների հիմքերը

վիճարկվում են Սահմանադրական դատարանում: Նման դեպքերում Սահմանադրական դատարանի դատավորներին արգելված չէ քննել գործը:

25. Այնուամենայնիվ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ «Վեթինգի մասին» օրենքի սահմանադրականությունը քննող դատավորը չէր կարողանա պահպանել նույն օրենքով սահմանված պահանջները եւ այդպիսով անհամապատասխան կդառնար տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար, դատավորը ոչ միայն իրավունք ունի, այլ որոշակի հանգամանքներում պարտավոր է հրաժարական տալ, օրինակ՝ այն դեպքում, երբ տվյալ դատավորը կանխատեսում է իր կողմից գնահատման պահանջներին բավարարելու անկարողությունը՝ կազմակերպված հանցագործության անդամների հետ ոչ պատշաճ փոխկապակցվածություն ունենալու պատճառով: Այնուամենայնիվ, քանի որ առկա է կանխավարկած այն մասին, որ դատարանի դատավորները գործում են բարեխղճորեն, դատավորին պետք է թույլ տրվի գնահատել օրենքով սահմանված պահանջների սահմանադրականությունը:

26. Քաղաքական տեսանկյունից «Վեթինգի մասին» օրենքում Սահմանադրական դատարանի բոլոր դատավորների ինքնաբացարկը պահանջող շահերի հնարավոր բախման դեպքում օրենսդրական կարգավորման բացակայությունը կարող է մեկնաբանվել որպես օրենսդրության դատական վերանայման գործառնության սահմանադրական անհրաժեշտության ճանաչում: ... Սահմանադրական դատարանը կարող էր հաշվի առնել նաեւ *[amicus curiae]* եզրակացության մեջ օգտագործած չափանիշները 2009 թվականի հոկտեմբերին Վենետիկի հանձնաժողովի (CDL-AD(2009)044) 80-րդ լիազույցար նիստում ընդունված «Ալբանիայի պետական կառավարման բարձրաստիճան պաշտոնյաների եւ ընտրված անձանց մաքրության մասին» օրենքի վերաբերյալ, այն է՝ օրենսդրության դատական վերանայման գործառնության հետ առնչվող դատավորի կողմից իրավական պարզաբանման սահմանը. ընդարձակ սահմանը կամ գործի վերաբերյալ վճիռ կայացնելու ազատությունը կարող են արդարացնել ինքնաբացարկը, սակայն այն դեպքում, երբ սահմանադրականության/հակասահմանադրականության հարցը բավականին պարզ է, եւ դատական որոշում կայացնելու գործընթացը չի ներառում դատավորի կողմից որեւէ սուբյեկտիվ գնահատական, պետք է գերիշխող լինի Սահմանադրական դատարանի՝ որպես ժողովրդավար հաստատության արդյունավետ գործունեությունը:

...

61. Շահերի բախման եւ Սահմանադրական դատարանի դատավորների հնարավոր ինքնաբացարկի հարցերի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովը հատկապես նշում է, որ Սահմանադրության եւ «Վեթինգի մասին» օրենքի համաձայն՝ Սահմանադրական դատարանի բոլոր դատավորները «Վեթինգի մասին» օրենքի առարկա են, որով

նախատեսվում է Ալբանիայում յուրաքանչյուր դատավորի, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի դատավորների վերագնահատում: Հետեւաբար շահերի հնարավոր բախումը կարող է ազդեցություն ունենալ ոչ միայն Սահմանադրական դատարանի մեկ կամ մի քանի դատավորների, այլ նաեւ Սահմանադրական դատարանում պաշտոնավարող բոլոր դատավորների զբաղեցրած պաշտոնների վրա: Հետեւաբար շահերի բախման առկայության պատճառով Սահմանադրական դատարանի դատավորների ինքնաբացարկը կարող էր պատճառ դառնալ «Վեթինգի մասին» օրենքի դատական վերանայման հնարավորության լիակատար բացառման՝ հաշվի առնելով նշված օրենքի համապատասխանությունը Սահմանադրությանը: Սա կարող էր խաթարել օրենսդրության՝ գործող դատական վերանայմամբ ապահովված երաշխիքները: Այս իրավիճակը Սահմանադրական դատարանի կողմից կարող էր դիտարկվել որպես «արտակարգ հանգամանք», ինչը կարող էր պահանջել շեղվել ինքնաբացարկի սկզբունքից՝ արդարադատության մերժումը կանխելու նպատակով:

...»:

Դ. Հայաստանի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի համապատասխան եզրակացությունները

53. Վենետիկի հանձնաժողովի կողմից 104-րդ լիազումար նիստում (2015 թվականի հոկտեմբերի 23-24, CDL-AD(2015)037, այսուհետ՝ 2015 թվականի եզրակացություն) հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (1-7-րդ եւ 10-րդ գլուխներ) փոփոխությունների նախագծի վերաբերյալ առաջին եզրակացության համապատասխան մասն ունի հետեւյալ բովանդակությունը¹⁶.

«144. Դատարանների եւ Բարձրագույն դատական խորհրդի վերաբերյալ գլուխը ներառում է արդարադատության իրականացման, դատարանների, դատավորների կարգավիճակի, Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի եւ Բարձրագույն դատական խորհրդի մասին հոդվածներ:

¹⁶ Սույն եզրակացությունն ուղարկվել է Հայաստանի իշխանություններին որպես նախնական եզրակացություն եւ հանրայնացվել է 2015 թվականի հուլիսի 30-ին: Այնուհետեւ այն հավանության է արժանացել Վենետիկի հանձնաժողովի կողմից 104-րդ լիազումար նիստին (2015 թվականի հոկտեմբերի 23-24):

145. «Դատարաններին» առնչվող 162-րդ հոդվածում թվարկվում են Հայաստանի Հանրապետության դատարանները, որոնց կազմում նշված է Սահմանադրական դատարանը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Սահմանադրական դատարանի՝ «լիազորությունների մասով սահմանադրական մարմինների միջև ծագող սահմանադրական վեճերը լուծելու» իրավասությունը (167-րդ հոդվածի 1.3 կետ)՝ Սահմանադրական դատարանը պետք է առանձնացված մնա այլ դատարաններից. Սահմանադրական դատարանը՝ որպես դատական համակարգի բաղկացուցիչ մաս, չի կարող նշված վեճերի կողմ լինել:

146. Ինչպես արդեն նշված է հայեցակարգային փաստաթղթի նախագծի եզրակացության մեջ, Վենետիկի հանձնաժողովը կարծում է, որ Սահմանադրության մեջ Սահմանադրական դատարանին նվիրված մաս (գլուխ) ունենալն ավելի պարզ կներկայացնի Սահմանադրական դատարանի առանձնահատուկ բնույթը:

...

161. Սահմանադրական դատարանը բաղկացած է ինը մարմնից, որոնցից երեքն ընտրվում են Հանրապետության նախագահի, երեքը՝ Կառավարության, երեքը՝ Դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ: Նրանք ընտրվում են Ազգային ժողովի կողմից՝ խորհրդարանականների ձայների ընդհանուր մեծամասնությամբ կայացված որոշմամբ ¹⁷ (166-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետեր): Համակարգը Սահմանադրական դատարանի համար նախատեսում է անհրաժեշտ ժողովրդավարական լեգիտիմություն:

...

165. 5-րդ պարբերությունը, որով սահմանված է, որ «Սահմանադրական դատարանի դատավորները պետք է պաշտոնավարեն 12 տարի ժամկետով՝ մինչև 70 տարեկանը լրանալը եւ չեն կարող վերընտրվել Սահմանադրական դատարանի դատավորի այդ պաշտոնում» համապատասխանում է եվրոպական գործելակերպին:

¹⁷ Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության համար խորհրդարանականների ձայների ընդհանուր թվի առնվազն երեք հինգերորդի որակյալ մեծամասնության պահանջը հետագայում ներմուծվել է Վենետիկի հանձնաժողովի հավանությանն է արժանացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (մասնավորապես 8-րդ, 9-րդ, 11-16-րդ գլուխների) փոփոխությունների նախագծի վերաբերյալ երկրորդ եզրակացությամբ, ինչպես նաև Վենետիկի հանձնաժողովի հավանությանն է արժանացել 104-րդ լիազումար նիստին (2015 թվականի հոկտեմբերի 23-24, CDL-AD(2015)038):

166. Սահմանադրական դատարանի նախագահը եւ նախագահի տեղակալն ընտրվում են Դատարանի կողմից Դատարանի անդամներից (5-րդ կետ), ինչը լավ երաշխիք է Դատարանի անկախության համար: Նախագահը եւ նախագահի տեղակալն ընտրվում են վեց տարի ժամկետով եւ չեն կարող վերընտրվել:

54. Դատական օրենսգրքի եւ Վենետիկի հանձնաժողովի կողմից 120-րդ լիազումար նիստում (2019 թվականի հոկտեմբերի 11-12-ին, CDL-AD(2019)024, այսուհետ՝ «2019 թվականի եզրակացություն») ընդունված որոշ այլ օրենքների փոփոխությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի եւ Եվրոպայի խորհրդի՝ Մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինության (ՄԻԳՏ) Մարդու իրավունքների տնօրինության (ՄԻՏ) համատեղ եզրակացության (այսուհետ՝ 2019 թվականի եզրակացություն) համապատասխան մասն ունի հետեւյալ բովանդակությունը.

«57. Փաթեթում պարունակվող փոփոխություններից մեկն առանձնանում է. դա փոփոխություն է «Սահմանադրական դատարանի (ՍԴ) մասին» օրենքում, որը հնարավորություն է ընձեռում ՍԴ հատուկ կատեգորիայի դատավորներին (անդամները, այսինքն՝ այն դատավորները, որոնք ձեռք են բերել իրենց մանդատը հին Սահմանադրությամբ՝ ցմահ, մինչեւ թոշակի անցնելը) իրենց ցանկությամբ պաշտոնաթող լինել մինչեւ մանդատի ավարտը՝ մի քանի առավելություններով, իրենց ցանկության դեպքում: Իշխանություններն իրենց մտադրությունների մասով միանշանակ էին. նրանք ցանկանում են առաջարկել կոնկրետ դատավորների, որոնց իրենք ասոցացնում են «հին ռեժիմի» հետ, «արժանապատիվ ելք»՝ որպես այս տարի ավելի վաղ դիտարկված ավելի արմատական եղանակների այլընտրանք: Իշխանությունները խրախուսում են այս առաջարկը՝ վկայակոչելով հեղափոխության համատեքստը, որի համար անհրաժեշտ է մեծամասամբ նախկին ռեժիմի ժամանակ նշանակված ՍԴ կազմի նորացում, ինչպես նաեւ վկայակոչելով ՍԴ ներկայիս կազմի նկատմամբ հանրային անվստահությունը:

58. Վենետիկի հանձնաժողովը ցանկանում է ընդգծել, որ Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման անվտանգությունն էական երաշխիք է նրանց անկախության համար: Անփոփոխելիությունը նախատեսված է Սահմանադրական դատարանի դատավորներին տվյալ ժամանակվա քաղաքական մեծամասնության ազդեցությունից պաշտպանելու համար: Անընդունելի կլինեն, եթե յուրաքանչյուր նոր կառավարություն կարողանար գործող դատավորներին փոխարինել իրենց ցանկությամբ ընտրված նոր դատավորներով:

59. Հայաստանի իշխանությունները պլանավորում են վաղ կենսաթոշակի անցնելու բացառիկ սխեմա: Նրանք վկայակոչում են 2015 թվականին վերանայված Սահմանադրության կատարումը հետհեղափոխական համատեքստում եւ կարծում են, որ Սահմանադրական դատարանի դատավորների կողմից ցմահ պաշտոնավարումից (որը նախատեսված էր Սահմանադրությամբ՝ մինչեւ 2015 թվականի վերանայումը) անցումը ֆիքսված ժամկետով մանդատին (սահմանված Սահմանադրության գործող տարբերակով) պետք է կիրառվի անմիջապես:

60. Վենետիկի հանձնաժողովն ի սկզբանե նշել է, որ ՍԴ-ի բոլոր դատավորները պետք է ունենան նույն կարգավիճակը՝ անկախ այն բանից, նրանք նշանակվել են մինչեւ 2015 թվականի Սահմանադրության վերանայումը, թե դրանից հետո: Ինչ վերաբերում է 2015 թվականի վերանայումից առաջ նշանակված դատավորների՝ վաղ կենսաթոշակի անցնելու սխեմային, Վենետիկի հանձնաժողովը նախկինում քննադատել է վաղ կենսաթոշակի անցնելու սխեմաները, երբ դրանք պարտադիր էին, կամ երբ դրանք ազդում էին մեծ թվով դատավորների վրա: Այնուամենայնիվ, այս քննադատությունը չի կարող ներկայացվել այն դեպքում, երբ հրաժարականը պայմանավորված է ՍԴ-ի դատավորների ինքնակամ որոշումով: Սկզբունքորեն այն դեպքում, երբ վաղ կենսաթոշակի անցնելու սխեման իսկապես ինքնակամ է, այն է՝ բացառում է ոչ տեղին (քաղաքական կամ անձնական) ճնշումը դատավորների վրա, կամ այն դեպքում, երբ այն նախատեսված չէ քննության ենթակա գործերի ելքի վրա ազդելու համար, առկա չեն այնպիսի չափորոշիչներ, որոնք կարող են պատճառ դառնալ, որ Վենետիկի հանձնաժողովը գործի տվյալ սխեմային հակառակ: Այնուամենայնիվ, մի քանի եւ անգամ ինը դատավորից յոթի հնարավոր համաժամանակյա պաշտոնանկությունը կարող է խանգարել Դատարանի արդյունավետ գործունեությանը: Այդ իսկ պատճառով Վենետիկի հանձնաժողովը խորհուրդ է տալիս, որ Հայաստանի իշխանությունները վերանայեն առաջարկվող սխեման՝ տվյալ խնդրի մեղմման նպատակով»:

55. 2020 թվականի հունիսի 19-ին Վենետիկի հանձնաժողովի կողմից (CDL-AD(2020)16 գրավոր ընթացակարգով ընդունված՝ Սահմանադրական դատարանի դատավորների մանդատի վերաբերյալ սահմանադրական փոփոխությունների նախագծի համատեքստում առկա երեք իրավական հարցերի վերաբերյալ եզրակացության համապատասխան մասը (այսուհետ՝ 2020 թվականի եզրակացություն) ունի հետեւյալ բովանդակությունը.

«Ա. Առաջին հարցը. ներկայիս իրավիճակում ո՞րն է Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրությամբ սահմանված նոր մոդելը կյանքի կոչելու լավագույն եղանակը (փոփոխված 2015 թվականին):

...

1. Կիրառելի միջազգային չափորոշիչներն ու նախկին եզրակացությունները

27. Առաջին հարցի գնահատման համար ուղղորդող սկզբունքներն են դատարանների եւ դրանց անդամների անկախությունը, դատավորների միջեւ անհարկի աստիճանակարգային հարաբերություններից կամ անհավասարությունից խուսափելը, ինչպես նաեւ վստահությունն ինստիտուտի նկատմամբ:

28. Անցյալում Վենետիկի հանձնաժողովը բազմիցս քննադատել է դատավորների՝ կենսաթոշակի անցնելու տարիքի կամ պաշտոնավարման ժամկետի հետ կապված փոփոխությունները՝ անգամ դատական համակարգի ընդհանուր բարեփոխումների շրջանակներում, մասնավորապես այն դեպքում, երբ այդպիսի փոփոխությունները կատարվել են հապճեպ եւ առանց համոզիչ հիմնավորման: Կենսաթոշակային տարիքի կամ պաշտոնավարման ժամկետի հետ կապված հետադարձ ուժ ունեցող փոփոխություններն ազդում են դատավորների անկախության վրա եւ կախված տուժած դատավորների քանակից՝ նաեւ բացասաբար են ազդում դատարանի արդյունավետության վրա: Դա է պատճառը, որ դատական անկախության միջազգային չափորոշիչները ակնհայտ կերպով երաշխավորում են պաշտոնավարման անվտանգությունը մինչեւ պարտադիր կենսաթոշակային տարիքի հասնելը կամ պաշտոնավարման ժամկետը լրանալը եւ միեւնույն ժամանակ սահմանափակում են պաշտոնանկության հիմքերը անգործունակության կամ պաշտոնեական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու դեպքերում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) պարբերաբար ընդգծել է դատավորների պաշտոնավարման ժամկետի եւ նրանց անկախության միջեւ առկա սերտ կապը: Իսկապես, դատավորների պաշտոնավարման անվտանգությունը արդարադատության բոլոր համակարգերում համընդհանուր ճանաչում ստացած սկզբունք է, որի համաձայն հարգվում է օրենքի գերակայության սկզբունքը, եւ բացառությունները համոզիչ հիմքեր են պահանջում: Բական ընդդեմ Հունգարիայի գործով ՄԻԵԴ-ն անդրադարձ է կատարել հետադարձ ուժի հիման վրա դատավորի պաշտոնավարման ժամկետի նվազեցման հարցին:

«Ավելին, թեեւ դիմումատուն մնացել է իր պաշտոնում որպես դատավոր եւ նոր Կուրիայի քաղաքացիական հարցերով բաժնի նախագահ, նա հեռացվել է Գերագույն դատարանի նախագահի պաշտոնից՝ իր ընտրվելու պահին գործող օրենսդրությամբ

սահմանված ֆիքսված ժամկետի ավարտից երեքուկես տարի առաջ: Դա հազիվ թե հնարավոր լինի համատեղել այն առանձնահատուկ նկատառման հետ, որը ցուցաբերվում է դատական գործունեության՝ որպես պետական իշխանության անկախ ճյուղի բնույթի նկատմամբ, ինչպես նաև դատավորների անփոփոխելիության սկզբունքի նկատմամբ, որը, Դատարանի նախադեպային իրավունքին, միջազգային ու Եվրոպայի խորհրդի գործիքներին համապատասխան, դատական անկախության պահպանման հիմնական բաղադրիչն է...»:

29. Դրա ֆոնին է, որ Վենետիկի հանձնաժողովն իր 2019 թվականի հոկտեմբերի եզրակացության մեջ ընդգծել է պաշտոնավարման անվտանգության եւ դատական անկախության միջեւ կապը ...:

...

2. 213-րդ անցումային հոդվածի վերաբերյալ առաջարկվող փոփոխություններ

ա. Սահմանադրական դատարանի դատավորների վերաբերյալ

32. Վերջին 25 տարիների ընթացքում Հայաստանում սահմանադրական զարգացման գործընթացն ընթանում է շարունակական պայքարով՝ ուղղված ժողովրդավարական չափորոշիչների բարելավմանը եւ օրենքի գերակայության սկզբունքի խթանմանը: Սույն գործընթացն ուղեկցվում էր Վենետիկի հանձնաժողովի կողմից կանոնավոր կերպով տրամադրվող խորհրդատվությամբ եւ զերծ չէր քաղաքական բախումներից: Այս գործընթացում գործող դատավորների անկախության համար անհանգստությունը շատ արտահայտված էր:

33. Իսկապես, 2015 թվականի փոփոխություններով ներդրված՝ Սահմանադրության 7-րդ գլուխը (Դատարաններ եւ Բարձրագույն դատական խորհուրդ) ընդգրկում է մի շարք դրույթներ, որոնք ենթադրաբար սահմանում են օրենքի գերակայության սկզբունքով կառավարվող ժողովրդավարական համակարգի հնարավոր անկախության եւ անաչառության ամենաբարձր մակարդակը՝ հատկապես դատավորների կարգավիճակի, ինչպես նաև ընտրության եւ նշանակման ընթացակարգի վերաբերյալ (մասնավորապես՝ 164-167-րդ հոդվածները):

34. Կոնկրետ Սահմանադրական դատարանի դատավորների մասով՝ Խորհրդարանի կողմից նրանց ընտրվելու համար ծայրերի ընդհանուր թվի երեք հինգերորդի որակյալ մեծամասնության նոր պահանջի ներմուծումը նպատակ ունի ապահովելու, որ իշխող մեծամասնությունը չլինի այնպիսի կարգավիճակում, որը նրան թույլ կտա վերահսկել նշանակումները: Այդպիսով դա պաշտպանում է Սահմանադրական

դատարանի դատավորներին քաղաքական մեծամասնության ազդեցությունից: Ավելին, վերընտրվելու հնարավորության բացառումը (նոր 166-րդ հոդվածի 1-ին կետ), անկասկած, օժանդակում է դատավորների անկախությանը: Մինչդեռ առկա են դատական համակարգեր, որոնք նախատեսում են դատավորների կողմից վերընտրվելու հնարավորությունը, ինչպես Լիխտենշտեյնի Սահմանադրական դատարանի (Ստացագերիշտֆ) [Staatsgerichtshof] (105-րդ հոդվածը Լիխտենշտեյնի Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ կետի վկայակոչմամբ) կամ Եվրոպական միության արդարադատության դատարանի դեպքում, ըստ եվրոպական չափորոշի՝ Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման ժամկետները երկարաձգելի չեն, եւ բացառված է վերընտրվելու հնարավորությունը:

35. Մյուս կողմից՝ մի շարք սահմանադրական համակարգերում Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման ժամկետների սահմանափակումներն ընդունված են (ի հակադրություն քաղաքացիական եւ քրեական դատարանների սովորական դատավորների, որտեղ դատավորի գործունեության ժամկետը սահմանափակվում է՝ պայմանավորված կենսաթոշակային տարիքը լրանալու հանգամանքով): Տասներկու տարվա ժամկետն ամբողջությամբ համապատասխանում է եվրոպական չափորոշիչներին: Նման սահմանափակ ժամկետն անհերքելիորեն թույլ է տալիս Դատարանի կազմի կանոնավոր եւ մասնակի թարմացումը՝ ապահովելով հետերոգենության եւ բազմակարծության որոշակի մակարդակ եւ ներկայացվածության ավելի մեծ հավասարակշռություն: Այն փոփոխվող խորհրդարանական մեծամասնությանը թույլ է տալիս ընտրել այս կամ այն ուղղվածությունն ունեցող դատավորներին եւ ավելի լավ է արտացոլում հասարակության փոփոխվող քաղաքական եւ սոցիալական հայացքները:

36. Հայաստանում տեղի ունեցող զգալի եւ դրական զարգացումներին զուգահեռ՝ 2015 թվականի փոփոխություններն ապահովում էին Սահմանադրական դատարանի գործող դատավորների պաշտոնավարումը՝ պահպանելով նրանց նշանակման սկզբնական ժամկետները: Այդ պատճառով դա երաշխավորում էր այդ դատավորների կողմից պաշտոնավարման շարունակությունը՝ մինչեւ կենսաթոշակի տարիքը լրանալը՝ չսահմանափակվելով իրենց մանդատում վերջերս ներմուծված տասներկուամյա ժամկետով (անցումային 213-րդ հոդված): Հետեւաբար 2015 թվականի փոփոխությունների հիման վրա Սահմանադրական դատարանի բարեփոխումը եւ ֆիքսված ժամկետով մանդատի ներմուծումը չէին հանգեցրել Սահմանադրական դատարանի դատավորների անհապաղ եւ կտրուկ պաշտոնանկությանը:

...

45. Վենետիկի հանձնաժողովը վերահաստատում է, որ 2015 թվականի փոփոխությունների հիման վրա ներմուծված Սահմանադրության 7-րդ գլուխը նպատակ ունի սահմանելու անկախության եւ անկողմնակալության հնարավոր ամենաբարձր մակարդակը օրենքի գերակայության սկզբունքով կառավարվող ժողովրդավարական համակարգում, մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի դատավորների կարգավիճակի եւ ընտրության ընթացակարգի կապակցությամբ: Նրանց ընտրության կապակցությամբ Խորհրդարանում ձայների որակյալ մեծամասնության երեք հինգերորդի պահանջը եւ նրանց կողմից վերընտրվելու հնարավորության բացառումը, անկասկած, կարելի էրաշխիքներ են, որոնց շնորհիվ երաշխավորվում է Սահմանադրական դատարանի դատավորների անկախությունը: Մասնավորապես այդ երաշխիքների նպատակն է ապահովել, որ տվյալ օրվա դրությամբ իշխող մեծամասնությունը չլինի այնպիսի կարգավիճակում, որը թույլ կտա վերահսկել նշանակումները, ինչի արդյունքում այն բացարձակ իշխանություն չի ունենա Սահմանադրական դատարանի կազմի նկատմամբ:

46. Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման սահմանափակ ժամկետի ներմուծումը, ինչպես նշվել է վերեւում, կատարելապես համահունչ է եվրոպական չափորոշիչներին այն առումով, որ այն Դատարանում ներկայացվածության ավելի զգալի հավասարակշռություն է ապահովում:

47. Պետք է հաշվի առնել նաեւ, որ ներկայիս մեծամասնությունը նպատակ չի հետապնդում փոփոխել բարձր ժողովրդավարական չափորոշիչները՝ հետ կանգնելով եւ հրաժարվելով 2015 թվականի բարեփոխման արդյունքում ստացված ձեռքբերումներից եւ ներմուծելով կանոններ, որոնք մեծամասնությանը թույլ կտային վերահսկել նշանակումները: Ընդհակառակը, պարզվում է, որ իշխանությունների նպատակն է ապահովել, որ նոր դրույթները դրական արդյունք տան, եւ որ Դատարանի կազմը հնարավորինս արագ արտացոլի այդ դրույթներով սահմանված՝ ներմուծված ժողովրդավարական չափորոշիչները: Սա օրինական նպատակ է:

48. Հանձնաժողովն ընդունում է, որ տվյալ համատեքստում փոփոխությունների ընդունման եւ դրանց վերջնական կատարման միջեւ ընկած ժամանակահատվածը, որը կարող է տեւել մինչեւ 20 տարի, անսովոր եւ չափազանց երկար է եւ էականորեն խոչընդոտում է 2015 թվականի փոփոխությունների կիրառմանը: Ավելին, այն ճանաչում է Դատարանի գործող դատավորների կարգավիճակի հավասարությունն ապահովելու իշխանությունների ցանկության եւ ներկայիս իրադրության հետեւանքով օրենսդրական անհավասարությունների դեմ իրավական պաշտպանության միջոցներ տրամադրելու ցանկության լեգիտիմությունը, ինչը մասնավորապես վերաբերում է նրանց

պաշտոնավարման ժամկետին: Հանձնաժողովը մատնանշում է 2019 թվականի իր եզրակացությունը, որտեղ նախապատվություն է տրվում այնպիսի համակարգին, որտեղ Սահմանադրական դատարանի բոլոր դատավորներն ունենին նույն կարգավիճակը՝ անկախ իրենց նշանակման ժամկետից:

49. Տվյալ պահանջին համապատասխան առաջարկվող փոփոխությամբ խորհուրդ է տրվում գործող դատավորների նկատմամբ կիրառել ֆիքսված ժամկետով մանդատը՝ այդպիսով սահմանափակելով նրանց ցմահ մանդատը՝ մինչև կենսաթոշակային տարիքը լրանալը: Հանձնաժողովը կարծում է, որ պետք է հաշվի առնել, որ ֆիքսված ժամկետով մանդատի սահմանափակում ենթադրող միջոցի համեմատությամբ դատավորների անփոփոխելիության սկզբունքին սույն առաջարկով պայմանավորված միջամտությունն ավելի փոքր է:

50. Ավելին, առաջարկվող միջոցի նպատակն է ստանդարտացնել դատավորների պաշտոնավարման ժամկետները՝ հիմնվելով Սահմանադրական դատարանի ընդհանուր բարեփոխման վրա, եւ 2015 թվականի փոփոխություններն ուժի մեջ մտնելու հանգամանքով պայմանավորված՝ սահմանային կետին համապատասխան պաշտոնանկ անելու փոխարեն բոլոր դատավորներին ենթարկել նույն ընդհանուր կանոնին, ինչպես ի սկզբանե առաջարկվել էր:

51. Ուստի հայաստանյան իշխանությունների կողմից առաջարկված նոր մոտեցման օգտին առկա են լավ փաստարկներ:

52. Այնուամենայնիվ, ինչպես նշված է վերեւում, դատավորների անփոփոխելիության սկզբունքին ցանկացած միջամտություն շարունակում է մնալ խիստ խնդրահարույց եւ պետք է խստորեն սահմանափակվի: Պետք է գտնել այնպիսի լուծում, որի միջոցով հնարավորինս կհամաձայնեցվեն իրար հակասող շահերը: Այդ առումով Հանձնաժողովը մասնավորապես հաշվի է առնում, որ 2015 թվականի բարեփոխումը՝ ներմուծված ժողովրդավարական երաշխիքներով, իշխող մեծամասնության կողմից Դատարանի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորություն չի թողնում: Այն նաեւ ընդգծում է Հայաստանում նոր սահմանադրական դրոյթներն առանց չափազանց եւ անհիմն ուշացման ուժի մեջ մտնելու օրինական անհրաժեշտությունը:

53. Հանձնաժողովը վերահաստատում է, որ Սահմանադրական դատարանի նոր մոդելը կյանքի է կոչվելու համապատասխան եղանակով, այն է՝ պահպանել ներկայիս դատավորների պաշտոնավարման ժամկետները եւ թույլ տալ պաշտոնավարման նոր ժամկետների աստիճանական ներմուծումը սովորական փոխարինումների միջոցով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Հայաստանում առկա հանգամանքները, հնարավոր

լուծումներից մեկն է փոփոխել գործող 213-րդ հոդվածը եւ ապահովել Սահմանադրական դատարանի թարմացումը՝ հաշվի առնելով անցումային շրջանը: Անցումային շրջանը թույլ է տալիս Դատարանի կազմի աստիճանական փոփոխությունը՝ խուսափելու համար այս ինստիտուտի անկախությունը վտանգող որեւէ կտրուկ եւ անհապաղ փոփոխությունից: Իշխանություններն ավելի լավ կարող են սահմանել անցումային շրջանի տեւողությունը, եւ Հանձնաժողովն իրավասու չէ առաջարկել կոնկրետ ժամանակահատված: Սույն ժամանակահատվածի տեւողությունը սահմանելը պահանջում է հավասարակշռություն երկու իրար հակասող հանրային շահերի միջեւ. մի կողմից՝ անցումային շրջանը պետք է ունենա նվազագույն տեւողություն՝ պայմանավորված յուրաքանչյուր առանձին դատավորի պաշտոնավարման մնացած ժամկետով, որպեսզի առկա չլինի անհամաչափ միջամտություն դատավորների անփոփոխելիության սկզբունքին: Մյուս կողմից՝ չափազանց եւ անհիմն երկարատեւ անցումային ժամանակաշրջանը, որը դուրս է իր նպատակային շրջանակից, խոչընդոտում է 2015 թվականի փոփոխություններով սահմանված սահմանադրական իշխանության կամքի իրականացմանը: Այդ պատճառով կարելու է թույլ տալ որոշակի ժամանակահատվածում աստիճանական փոփոխությունը, որի տեւողությունը թույլ է տալիս պահպանել նշված հավասարակշռությունը, եւ ապահովել, որ սույն միջոցը շարունակի բացառություն լինել եւ որեւէ վտանգավոր նախադեպ չստեղծի հետագա կառավարությունների համար:

բ. Սահմանադրական դատարանի նախագահի վերաբերյալ

54. Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնին, սույն եզրակացության համար ներկայացված պահանջում առկա բացատրությունների հիման վրա կարելի է ենթադրել, որ Սահմանադրության՝ 2005 թվականին ընդունված տարբերակի դրույթների հիման վրա 2018 թվականի մարտի 21-ին ընտրված ներկայիս նախագահի մանդատը, որի՝ որպես դատավորի եւ որպես նախագահի պաշտոնավարման ժամկետը սովորական պայմաններում պետք է ավարտվի 2035 թվականին, պետք է դադարի, եւ գործընկերների կողմից պետք է ընտրվի նոր նախագահ՝ գործող Սահմանադրությամբ (166-րդ հոդված) սահմանված ընթացակարգով՝ անընդմեջ պաշտոնավարման 6 տարի ժամկետով: Իշխանությունները կարծում են, որ այս լուծումը պետք է համապատասխանի դատարանների եւ Վճռաբեկ դատարանի նախագահների վերաբերյալ Սահմանադրության 215-րդ հոդվածի տրամաբանությանը, որը նախատեսում է, որ «Դատարանների նախագահները եւ Վճռաբեկ դատարանի պալատների նախագահները, որոնք նշանակվել են Սահմանադրության 7-րդ գլուխն ուժի մեջ մտնելուց առաջ, պետք է

շարունակեն պաշտոնավարումը մինչեւ Սահմանադրության 166-րդ հոդվածով սահմանված ընթացակարգով դատարանների նախագահների եւ Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակումը կամ ընտրությունը, որը պետք է տեղի ունենա ոչ ուշ, քան Բարձրագույն դատական խորհրդի կազմավորումից հետո՝ վեց ամսվա ընթացքում»։ Պետք է նշել նաեւ, որ պահանջում ներկայացված առաջարկը վերաբերում է միայն նախագահի մանդատի դադարեցմանը, ոչ թե նաեւ դատավորի պաշտոնավարման ժամկետին։

55. Վենետիկի հանձնաժողովը հիշեցնում է, որ Եվրոպայում առկա են նախագահների, փոխնախագահների եւ պալատների կամ խմբերի փոխնախագահների եւ նախագահների ընտրության երկու համակարգեր։ Որոշ պետություններում, ինչպիսիք են Գերմանիան կամ Ավստրիան, նախագահը եւ փոխնախագահն ընտրվում են այլ դատավորներին ընտրելու համար իրավասու մարմինների (Կառավարություն, Խորհրդարան) կողմից։ Մյուս կողմից՝ մի շարք համակարգեր, եթե ոչ համակարգերի մեծ մասը, նախատեսում են այդ դատարանի դատավորների կողմից նախագահների ընտրությունը։ Ամենից առաջ եւ անխուսափելիորեն այդպես է ՄԻԵԴ-ում եւ Եվրոպական միության արդարադատության դատարանում։ Ներկայիս վերլուծության համար վերջին խմբում առկա են համապատասխան չափորոշիչներ։ Այս առումով դատարանի նախագահների համար ընդունելի են ավելի կարճ ժամկետներ, եւ դրանք ավելի շատ կարող են օժանդակել դատավորների կոլեգիալությանը, քան աստիճանակարգությանը։ Օրինակ՝ Բոսնիայում եւ Հերցեգովինայում միջազգային ուժեղ ճնշման ներքո հիմնադրված Սահմանադրական դատարանի նախագահն ընտրվում է գաղտնի քվեարկությամբ տվյալ սուբյեկտների օրենսդիր մարմինների կողմից ընտրված դատարանի դատավորների ռոտացիայի միջոցով՝ երեք տարվա ժամկետով (Բոսնիայի եւ Հերցեգովինայի Սահմանադրական դատարանի կանոնակարգի 84-րդ հոդված), որն ավելի կարճ է, քան Հայաստանի դեպքում։ Հայաստանի դեպքում Դատարանի նախագահը ներկայիս կանոններին համապատասխան շարունակում է պաշտոնավարել 17 տարի, ինչն ավելի երկար ժամկետ է, քան նախատեսված է դատավորների համար նոր Սահմանադրությամբ։ Սա նախագահի կողմից գերիշխող դեր զբաղեցնելու ռիսկ է պարունակում եւ չի նպաստում դատավորների կոլեգիալությանը։

56. Հանձնաժողովը նաեւ հաշվի է առնում իշխանությունների պնդումն այն մասին, որ 2018 թվականի մարտի 21-ին Սահմանադրական դատարանի ներկայիս նախագահի՝ Սահմանադրության 2005 թվականի դրոյթներին համապատասխան եւ 2015 թվականի փոփոխություններն ուժի մեջ մտնելուց ընդամենը երեք շաբաթ առաջ կատարված ընտրությունը հակասում էր այդ փոփոխությունների էությանը՝ մի կողմից նպատակ ունենալով երաշխավորել դատական համակարգի եւ Սահմանադրական դատարանի ավելի

մեծ անկախությունը Խորհրդարանից, իսկ մյուս կողմից՝ հնարավորություն տալով նախագահման հերթագայություն իրականացնել: Ամեն դեպքում նա ընտրվել է այն ժամանակ, երբ պաշտոնավարման ժամկետի վերաբերյալ նոր կանոններն արդեն բավականին երկար ժամանակ ընդունված են եղել: Այդ պատճառով նրա հետ կապված իրավիճակը միանգամայն տարբեր է Սահմանադրության նախկին տարբերակին համապատասխան ընտրված նախագահի հետ կապված իրավիճակից, երբ հայտնի չէ՝ արդյոք պաշտոնավարման ժամկետը կկրճատվի:

57. Ավելին, նախագահի պաշտոնավարման ժամկետի կրճատումը բոլոր դատավորների պաշտոնավարման ժամկետի կրճատման համեմատությամբ չունի միեւնույն ազդեցությունը դատարանի անկախության վրա, իսկ միջազգային չափորոշիչները նրա պաշտոնի կապակցությամբ ավելի մեծ ազատություն են տրամադրում: Նրանք զատորոշում են դատավորների դատական գործառույթներն ու վարչական գործառույթները: Նախկին եզրակացություններում Վենետիկի հանձնաժողովը Դատարանի նախագահների պաշտոնի համար ընդունել է պաշտոնավարման ավելի կարճ ժամկետներ՝ պայմանով, որ որպես դատավոր նրանց կարգավիճակը պահպանվի, իսկ որպես Դատարանի նախագահ պաշտոնավարման ժամկետը լրանալը որեւէ կերպ չազդի նրա՝ որպես դատավոր կարգավիճակի վրա: Այնուամենայնիվ, գործնականում դատական համակարգի եւ դատական գործառույթների իրականացման միջեւ տարբերակումը կարող է այնքան էլ հստակ չլինել, ինչպես ներկայացված է վերոնշյալ Բակայի գործում: Թեեւ նշված գործը բավականին տարբեր է դիտարկվող հարցից, քանի որ այն վերաբերում է Հունգարիայի գերագույն դատարանի նախագահի մանդատի ֆիքսված ժամկետի կասեցմանը եւ ոչ թե մինչ կենսաթոշակի անցնելն առկա մանդատի սահմանափակումը ներմուծելուն, ՄԻԵԴ-ը դատական անկախության համար խնդրահարույց է համարել այն հանգամանքը, որ դիմումատուն հեռացվել է նախագահի պաշտոնից, թեեւ նա շարունակել է մնալ տվյալ դատարանի դատավորի պաշտոնում: Համոզիչ հիմքեր չներկայացնելու դեպքում Վենետիկի հանձնաժողովը նույնպես զգուշություն է ցուցաբերել դատարանի նախագահի մանդատի կասեցումը որպես ընդհանուր բարեփոխման մաս ընդունելիս: Այն դեպքում, երբ հաստատվում են լեզիտիմ եւ համոզիչ հիմքերը, դատարանի նախագահի մանդատի կասեցման դեպքում պետք է, այնուամենայնիվ, հարգել իրավական որոշակիության (լեզիտիմ ակնկալիքների) եւ համաչափության սկզբունքները:

58. Նաեւ պետք է նշել, որ Սահմանադրական դատարանների կամ Գերագույն դատարանների նախագահները շարքային դատավորների համեմատությամբ ավելի հաճախ են հակասություններ ունենում Կառավարության, պետության ղեկավարի կամ խորհրդարանական խմբերի հետ: Դատարանի նախագահները հասարակության մեջ եւ

լրատվամիջոցներում հանդես են գալիս որպես իրենց դատարանի ներկայացուցիչ եւ առնչվում են որոշ որոշումների հետ, որոնք կարող են վիճարկվել հանրային բանավեճերում կամ չարժանանալ Կառավարության հավանությանը, թեեւ այդ որոշումները կայացվել են դատավորների խմբի կողմից:

59. Այս ֆոնին Վենետիկի հանձնաժողովը կարծում է, որ Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետի փոփոխությունները հնարավոր են, սակայն զգուշավոր մոտեցում են պահանջում: Ուստի 213-րդ հոդվածի հնարավոր փոփոխությունն ուժի մեջ մտնելու դեպքում նպատակահարմար կլիներ Դատարանի ներկայիս նախագահի մանդատն անմիջապես կասեցնելու փոխարեն նախատեսել անցումային շրջան:

Բ. Երկրորդ հարցը. Եվրոպական լավագույն չափորոշիչների տեսանկյունից կարո՞ղ էր արդյոք ընդունելի համարվել Դատարանի կողմից նախնական սահմանադրական վերանայման շրջանակը եւ հարաբերականորեն կարճ վերջնաժամկետ սահմանելը՝ հաշվի առնելով փոփոխությունների համապատասխանությունը Սահմանադրության անփոփոխելի հոդվածներին:

...

65. Սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ 2010 թվականի իր զեկույցում Վենետիկի հանձնաժողովը զատորոշել է սահմանադրական փոփոխությունների նյութաիրավական դատական վերանայումը եւ ընթացակարգային (պաշտոնական) վերանայումը՝ ստուգելու եւ ապահովելու համար, որ փոփոխություններն ընդունվեն նախատեսված սահմանադրական ընթացակարգերից հետո: Ինչ վերաբերում է ընթացակարգային վերանայմանը, Հանձնաժողովը որդեգրել է այն դիրքորոշումը, որ բոլոր սահմանադրական համակարգերը պետք է ժողովրդավարական եւ դատական հսկողություն իրականացնելու հնարավորություն ընձեռեն՝ ապահովելու համար, որ սահմանադրական փոփոխություններն ընդունվեն նախատեսված սահմանադրական ընթացակարգերին համապատասխան: Այս հարցը պետք է համապատասխանաբար քննվի դատարանի առջեւ, եւ դատարանների կողմից պետք է իրականացվի պաշտոնական հսկողություն, որը չպետք է խոչընդոտի սահմանադրական իշխանության կողմից իր ինքնիշխան իրավունքների իրականացմանը, այլ նաեւ պետք է ուղղված լինի ժողովրդավարության պահպանմանը:

66. Ինչ վերաբերում է սահմանադրական փոփոխությունների նյութաիրավական վերանայմանը, Վենետիկի հանձնաժողովն ավելի զգուշավոր մոտեցում է որդեգրել: Համեմատական սահմանադրական իրավունքում չկան սահմանադրական փոփոխությունների գործընթացում սահմանադրական դատարանների մասնակցության

վերաբերյալ համընդհանուր ընդունված չափորոշիչներ. Սահմանադրական փոփոխությունների նախագծի *ex ante* (պարտադիր նախնական) վերանայումը հազվադեպ է իրականացվում Սահմանադրական դատարանի կողմից. միեւնույն ժամանակ առկա են օրինակներ, երբ սահմանադրական դատարաններն օգտակար աջակցություններ են ցուցաբերել, որոնք բարելավել եւ ուղղորդել են հաջորդող խորհրդարանական եւ հանրային բանավեճերը, ինչպես նաեւ առկա են օրինակներ, երբ դատարանի նախնական ներգրավվածությունը զգալի խստություն է հաղորդել փոփոխությունների գործընթացին եւ խափանել է քաղաքական բանավեճը:

67. Հանձնաժողովի կողմից սահմանադրական փոփոխությունների նյութաիրավական դատական վերանայումը պետք է իրականացվի այն երկրներում, որտեղ դա արդեն բխում է հստակ եւ հաստատված դոկտրինից, անգամ այդտեղ զգուշությամբ՝ սահմանադրական օրենսդիր մարմնին թույլ տալով հայեցողության ազատություն: Քանի դեռ պահպանվում եւ հարգվում են սահմանադրական փոփոխությունների հատուկ պահանջները, որոնցից է խորհրդարանում ընտրված ներկայացուցիչների որակյալ մեծամասնության ապահովումը, ինչպես նաեւ պահպանվում եւ հարգվում են ընթացակարգային այլ պահանջներ, դրանք ապահովում են եւ պետք է ապահովեն բավարար երաշխիք չարաշահումների դեմ: Այդպիսի ընթացակարգերից հետո ընդունված փոփոխություններն ընդհանուր առմամբ ունեն ժողովրդավարական լեգիտիմության բավականին բարձր մակարդակ, ինչը դատարանը չի ցանկանա խափանել:

68. Հետեւաբար Հանձնաժողովն ընդհանուր առմամբ նախընտրում է սահմանափակել Սահմանադրական դատարանի կողմից կատարվող սահմանադրական փոփոխությունների վերանայման շրջանակը՝ այն դիտարկելով զուտ որպես ընթացակարգային հարցերի ուսումնասիրություն: Իսկապես ցանկալի է, որ օրինակ, սահմանադրական փոքրամասնությունը հնարավորություն ունենա խնդրելու Սահմանադրական Դատարանին, որ վերջինս քննությամբ պարզի, թե արդյոք պահպանվել է սահմանադրական փոփոխությունների ընդունման ընթացակարգը: Սա տարբերվում է Դատարանի կողմից իրականացված ընդհանուր նախնական *ex ante* վերանայումից:

69. Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ Հայաստանի Սահմանադրությունը նախատեսում է այդպիսի նախնական վերանայման հնարավորություն, ապա այդ կանոնն ակնհայտորեն պետք է պահպանվի: Այդպիսի վերանայման շրջանակը Սահմանադրության՝ անփոփոխելի դրույթների համապատասխանության հսկողությամբ սահմանափակելը համապատասխանում է եվրոպական չափորոշիչներին, եթե տվյալ սահմանափակումը չի հակասում Սահմանադրությանը: Դատական վերանայման շրջանակն այդ դեպքում

կախված է հենց Սահմանադրությամբ անփոփոխելի դրույթները սահմանելուց: Սահմանադրության «անփոփոխելիությունը» պետք է մեկնաբանվի ավելի նեղ իմաստով: Սահմանադրության 203-րդ հոդվածի համաձայն՝ անփոփոխելի են միայն 1-3-րդ եւ 203-րդ հոդվածները, ինչն առաջին հայացքից սահմանադրական փոփոխությունների դատական վերանայման բավականին սահմանափակ շրջանակ է: Հաշվի առնելով հանդիպումների ընթացքում Սահմանադրական դատարանի ներկայացուցիչների հայտարարությունն այն մասին, որ Սահմանադրական դատարանի կողմից կատարված սահմանադրական փոփոխությունների վերանայման շրջանակը կարող է ընդգրկել ամբողջ Սահմանադրությունը, Հանձնաժողովը գտնում է, որ Սահմանադրական դատարանի կողմից իր իսկ վերանայում իրականացնելու լիազորության ընդլայնված պարզաբանումն անտեղի կլիներ: Ինդիքահարույց կլիներ, եթե Սահմանադրական դատարանը անվավեր ճանաչեր սահմանադրական փոփոխությունները՝ հիմնվելով անորոշ սկզբունքների վրա, որոնք թույլ կապված կամ հիմնված են Սահմանադրության անփոփոխելի դրույթների ընդլայնված մեկնաբանության վրա:

...

71. Մասնավորապես իշխանությունների եւ այլ շահառուների հետ հանդիպումների ընթացքում մի հարց է նշվել, թե արդյոք այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանին առաջարկվի վերանայել Դատարանի դատավորների մանդատի վերաբերյալ փոփոխության սահմանադրականությունը, տեղի կունենա շահերի բախում, ինչը կխոչընդոտի, որ այդ դատավորները վերանայեն սահմանադրական փոփոխությունը: Վենետիկի հանձնաժողովը կարծում է, որ պետք է ապահովել, որ Սահմանադրական դատարանը՝ որպես Սահմանադրության երաշխավոր, կարողանա գործել որպես ժողովրդավարական ինստիտուտ, եւ դատավորներին բացառելու հնարավորությունը պատճառ չի դառնա Դատարանի կողմից որոշում կայացնելու անկարողության: «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը կարող է չօգտագործել որպես դատավոր իր պաշտոնից բխող իրավասությունը իր սեփական շահերի համար: Հետեւաբար, եթե Դատարանի դատավորը գտնում է, որ ինքը կարող է շահերի բախում ունենալ այն դեպքում, երբ իրեն առաջարկեն վերանայել իր մանդատի վերաբերյալ փոփոխության սահմանադրականությունը, ապա 14-րդ հոդվածի կանոնին համապատասխան՝ դատավորը գործն ընդհանուր կանոններով քննելու կապակցությամբ ինքնաբացարկ կհայտնի: Վենետիկի հանձնաժողովի կողմից, այնուամենայնիվ, պետք է տարբերակվի Սահմանադրական դատարանի անկախության վերաբերյալ Սահմանադրության ինստիտուցիոնալ սկզբունքներն ու դատավորների անձնական շահը:

Այս առումով Սահմանադրական դատարանը պետք է էական զսպվածություն ցուցաբերի՝ խուսափելով այնպիսի տպավորություն ստեղծելուց, թե Դատարանի վերաբերյալ փոփոխությունները վերանայելիս դատավորներն անձնական շահ են հետապնդում:

...

82. Հանձնաժողովն ափսոսանք է հայտնում, որ սահմանադրական փոփոխությունների առաջարկը ներկայացվել է Հայաստանի խորհրդարանին Վենետիկի հանձնաժողովի կողմից սույն եզրակացությունն ընդունելու օրը, որի տվյալ առաջարկը չի համապատասխանում սույն եզրակացության մեջ նշված խորհուրդներին:

Ե. Այլ նյութեր

56. Միացյալ Նահանգների «Ֆրիդոմ Հաուս» հասարակական կազմակերպության «Անցումային շրջանի երկրներ 2021, Հայաստան» զեկույցի համապատասխան մասն ունի հետևյալ բովանդակությունը.

«Լուրջ խոչընդոտներին հակառակ՝ հատկապես պատերազմից առաջ, Կառավարությունը որոշակի առաջընթաց է գրանցել՝ գործադրելով ջանքեր՝ ուղղված 2020 թվականի բարեփոխումներին»: Դատական համակարգի բարեփոխումը գլխավոր առաջնահերթություն է եղել, եւ 2020 թվականին օրենսդիր մարմինը լուծել է լեգիտիմության ճգնաժամը, որը շրջափակել էր երկրի Սահմանադրական դատարանը, որը մեծ հաշվով դիտարկվում էր որպես ՀՀԿ-ի [նախկինում ղեկավարող Հանրապետական կուսակցության] կողմից պաշարված մարմին: Հունիսին Ազգային ժողովը հաստատել է փոփոխությունների փաթեթը, որը Սահմանադրական դատարանի բոլոր դատավորների համար սահմանել է համընդհանուր 12 տարվա սահմանաչափ՝ հանգեցնելով Դատարանի գործող ինն անդամներից երեքի կենսաթոշակի անցնելուն եւ նրանց փոխարինմանը: Փոփոխությունները պատճառ դարձան հետքայլ կատարելու բարեփոխումների առավել ծայրահեղ առաջարկներից: 2019 թվականին Կառավարությունը ենթարկվել է ներպետական եւ միջազգային քննադատության՝ փորձելով ճնշում գործադրել Դատարանի նախագահող եւ ՀՀԿ-ի անդամ հանդիսացող Հրայր Թովմասյանի վրա եւ ստիպել նրան հրաժարական տալ: 2020 թվականին Թովմասյանը պահպանեց իր տեղը դատարանում, սակայն ոչ որպես նախագահող, եւ նրան քրեական մեղադրանք առաջադրվեց պաշտոնեական դիրքի չարաշահման համար: Հայաստանում դատարանները շարունակում են մնալ ամենաթույլ եւ ամենաքիչ վստահելի ինստիտուտները, եւ հետագա ժողովրդավարական առաջընթացի համար անհրաժեշտ է բոլոր մակարդակներով լուրջ դատական բարեփոխումներ իրականացնել:

ԲՈՂՈՔՆԵՐԸ

57. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ դիմումատուները բողոք էին ներկայացրել, որ իրենք՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորներ (առաջին երեք դիմումատուները) կամ այդ դատարանի նախագահ (չորրորդ դիմումատուն), հասանելիություն չեն ունեցել տրիբունալին՝ իրենց պաշտոնավարման ժամկետների դադարեցման կապակցությամբ իրենց իրավունքները պաշտպանելու համար: Դիմումատուներն այնուհետև Կոնվենցիայի 8-րդ հոդվածին՝ միայն տվյալ հոդվածին եւ համակցված 14-րդ եւ 18-րդ հոդվածներին համապատասխան բողոք են ներկայացրել այն մասին, որ նրանց պաշտոնավարման ժամկետների դադարեցումը կամայական է եղել: Ի վերջո, Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին համապատասխան՝ նրանք բողոք են ներկայացրել այն մասին, որ պաշտոնավարման ժամկետի վաղաժամկետ դադարեցման հետեւանքով կորցրել են իրենց հետագայում ստանալիք եկամուտը:

ՕՐԵՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴԻՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

Ա. Կողմերի փաստարկները

58. Կառավարությունն ընդունել է, որ Դատարանի կողմից Vilho Eskelinen-ը եւ այլք ընդդեմ Ֆինլանդիայի ([ՄՊ], թիվ 63235/00, § 62, ՄԻԵԴ 2007-II) գործին համապատասխան սահմանված թեստը, այսուհետ՝ Էսկելինենի գործով թեստ, կիրառելի էր քննարկվող գործի նկատմամբ: Նրանք պնդել են, որ այդ թեստի երկու պայմաններն էլ բավարարվել են՝ 6-րդ հոդվածը ճանաչելով ոչ կիրառելի: Նախեսառաջ, Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված հիմքերով նշված դիմումատուների պաշտոնավարման ժամկետները չեն դադարել

(տե՛ս վերոնշյալ 33-րդ պարբերությունը), որը նախատեսում էր Սահմանադրական դատարանի դատավորների մասնակցությամբ որոշ աշխատանքային վեճերի դատական պաշտպանությունը: Այն դեպքում, երբ այդ դատարանի դատավորի պաշտոնավարման ժամկետը դադարում է որեւէ այլ հիմքով, ինչպես տվյալ գործում, ներպետական օրենսդրությամբ դատարան մուտք գործելու հնարավորություն չի նախատեսվում (տե՛ս Սահմանադրության 164-րդ հոդվածի 8-րդ կետը՝ հիշատակված վերոնշյալ 33-րդ պարբերությունում): Ավելին, դիմումատուների պաշտոնավարման ժամկետներն ավարտվել են սահմանադրական փոփոխությունների միջոցով, որոնք ենթակա չէին դատական վերանայման՝ ուժի մեջ մտնելուց հետո: Այս առումով նրանք հղում են կատարել Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 11-ի որոշմանը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Կառավարությունը հաստատել է, որ Էսկելինենի գործով թեստի նպատակներով դիմումատուների մուտքը Դատարան «ուղղակիորեն բացառվել է» :

59. Անդրադառնալով Էսկելինենի գործով թեստի երկրորդ պայմանին՝ Կառավարությունը պնդել է, որ դատարան մուտքի հնարավորության բացառումն արդարացված է եղել օբյեկտիվ հիմքերով՝ պետության շահերից ելնելով, քանի որ 2020 թվականի սահմանադրական փոփոխություններն ընդունվել են՝ նպատակ ունենալով հարթել Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման տարբեր դեպքերում առաջացած հակասությունները եւ գործել 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների տրամաբանությամբ: Նրանք ավելացրել են, որ 2020 թվականի սահմանադրական փոփոխությունները համապատասխանել են օրենքի գերակայության սկզբունքին: Ի վերջո, Կառավարությունն ընդգծել է, որ Սահմանադրական դատարանի դատավորների եւ պետության միջեւ առկա է եղել «վստահության եւ հավատարմության առանձնահատուկ կապ»:

60. Հետեւաբար նրանց տեսանկյունից դիմումի նշված մասը *ratione materiae* (առարկայական իրավագործության առումով) համատեղելի չէր Կոնվենցիայի դրույթների հետ:

61. Դիմումատուները համաձայնության չեն եկել: Ընդունելով այն փաստը, որ ներպետական օրենսդրությամբ պաշտոնավարման ժամկետի դադարեցման կապակցությամբ իրենց իրավունքները պաշտպանելու համար դիմումատուները դատարան մուտքի հնարավորություն չեն ունեցել՝ նրանք նաեւ պնդել են, որ Էսկելինենի գործով թեստի նպատակներով դատարան մուտքը «ուղղակիորեն բացառված» չի եղել:

62. Ամեն դեպքում դիմումատուները հաստատել են, որ դատարան մուտքի հնարավորության բացառումը պետության շահով պայմանավորված օբյեկտիվ հիմքեր չի ունեցել: Առաջին հերթին նրանք վիճարկել են Սահմանադրական դատարանի բարեփոխումների անհրաժեշտությունը: Նրանք վիճարկել են, որ այդ ամենը տեղի է ունեցել իշխանությունների՝ գործող դատավորներին իրենց ընտրությամբ նորընտիր դատավորներով փոխարինելու եւ քննության ենթակա գործերի, այդ թվում՝ նախկին նախագահ Քոչարյանի գործի ելքի վրա ազդելու վճռականությամբ (տե՛ս վերոնշյալ 10-րդ պարբերությունը): Նրանք մասնավորապես վկայակոչել են այն դեպքերը, որոնք ներկայացված են վերոնշյալ 10-12-րդ պարբերություններում, ինչպես նաեւ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից արված հրապարակային հայտարարությունները (տե՛ս, օրինակ՝ վերոնշյալ 14-րդ պարբերությունում ներկայացված՝ վարչապետի հրապարակային հայտարարությունը). այն փաստը, որ իրենց չի թույլատրվել շարունակել պաշտոնավարել մինչեւ իրենց իրավահաջորդների նշանակումը, ինչպես նաեւ այն փաստը, որ իրենց չի թույլատրվել շարունակել զբաղվել այն գործերով, որոնք արդեն քննվում էին իրենց կողմից: Դիմումատուները նաեւ պնդել են, որ բարեփոխումը հակասում էր օրենքի գերակայության սկզբունքին, ու թեեւ ներպետական իրավունքին համապատասխան՝ Ազգային ժողովը պետք է խնդրո առարկա սահմանադրական փոփոխությունների նախնական սահմանադրական վերանայում պահանջեր, այն նախնական սահմանադրական վերանայում չպահանջելու որոշում էր կայացրել (տե՛ս վերոնշյալ 26-րդ պարբերությունը): Դիմումատուների կարծիքով՝ ներպետական իրավունքին համապատասխան՝

խնդրո առարկա սահմանադրական փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո ենթակա էին նաեւ դատական վերանայման: Նրանց կարծիքով՝ դա հակասում էր Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը եւ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին: Ավելին, ներպետական իշխանություններն ամբողջովին անտեսել են Վենետիկի հանձնաժողովի խորհուրդն այն մասին, որ սահմանվի անցումային շրջան՝ խուսափելու համար Սահմանադրական դատարանի կազմում կտրուկ եւ անհապաղ որեւէ փոփոխությունից՝ այդպիսով ոտնձգելով այդ հաստատության անկախության դեմ (տե՛ս վերոնշյալ 55-րդ կետում մեջբերված՝ 2020 թվականի եզրակացության 53-րդ, 59-րդ եւ 82-րդ կետերը): Ի վերջո, դիմումատուները վկայակոչել են Դատարանի նախադեպային իրավունքը, համաձայն որի՝ Դատարանը պետք է հատուկ ուշադրություն դարձնի դատական իշխանության անդամների պաշտպանությանն այնպիսի միջոցներից, որոնք կարող են վտանգել նրանց դատական անկախությունը եւ ինքնավարությունը:

63. Հետեւաբար դիմումատուները եկել են այնպիսի եզրահանգման, որ 6-րդ հոդվածը կիրառելի էր քաղաքացիական հայեցակետով:

Բ. Դատարանի գնահատականը

1. Դատարանի նախադեպային իրավունքից բխող ընդհանուր սկզբունքներ

64. Դատավորի պաշտոնավարման ժամկետը դադարեցնելու հանգամանքը պայմանավորող իրավիճակներում Էսկելինենի գործով թեստի (տե՛ս վերելում հիշատակված՝ Վիլիո Էսկելինենը եւ այլք, §62) լույսի ներքո 6-րդ հոդվածի 1-ին կետի «քաղաքացիական» հայեցակետի կիրառելիության վերաբերյալ համապատասխան սկզբունքները վերջերս վերահաստատվել են Գրգեդան ընդդեմ Լեհաստանի [ՄՊ], թիվ 43572/18 գործում, §§ 257-63, 2022 թվականի մարտի 15 (նախադեպային իրավունքի հղումները բաց են թողնվել):

«257. Որպեսզի 6-րդ հոդվածի 1-ին կետն իր «քաղաքացիական» հայեցակետով կիրառելի լինի, պետք է առկա լինի վեճ այն «իրավունքի» շուրջ, որի վերաբերյալ առնվազն վիճելի հիմքերով կարելի է ասել, որ այն ճանաչվում է ներպետական իրավունքով՝ անկախ այն բանից, թե արդյոք տվյալ իրավունքը պաշտպանված է Կոնվենցիայով: Վեճը պետք է իրական եւ լուրջ լինի. այն կարող է կապված լինել ոչ միայն իրավունքի փաստացի գոյության, այլ նաեւ դրա շրջանակի եւ իրականացման եղանակի հետ, եւ ի վերջո, վարույթի ելքը պետք է ուղղակիորեն որոշիչ լինի խնդրո առարկա իրավունքի համար. թույլ կապերը կամ աննշան հետեւանքները բավարար չեն 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառության համար ... Ի վերջո, իրավունքը պետք է «քաղաքացիական» բնույթ կրի ...

258. 6-րդ հոդվածի 1-ին կետը Պայմանավորվող պետությունների նյութաիրավական իրավունքում չի երաշխավորում քաղաքացիական «իրավունքների եւ պարտականությունների» վերաբերյալ որեւէ հատուկ բովանդակության առկայություն. 6-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանմամբ՝ Դատարանը կարող է եւ չստեղծել նյութաիրավական իրավունք, որն իրավական հիմք չունի համապատասխան պետությունում ...

259. Որոշելու համար, թե արդյոք խնդրո առարկա «իրավունքը» հիմնված է ներպետական իրավունքի վրա, սկզբնական կետը պետք է լինի համապատասխան ներպետական իրավունքի դրույթները եւ ներպետական դատարանների կողմից դրանց պարզաբանումը ... Դատարանը վերահաստատում է, որ հատկապես ներպետական մարմինները, մասնավորապես՝ դատարաններն են իրավասու լուծել ներպետական օրենսդրության մեկնաբանության հետ կապված խնդիրները: Եթե մեկնաբանությունը կամայական կամ ակնհայտորեն անհիմն չէ, Դատարանի դերը սահմանափակվում է այնպիսի պարզաբանմամբ, թե արդյոք այդպիսի մեկնաբանության հետեւանքները համապատասխանում են Կոնվենցիային ... Այսպիսով, այն դեպքում, երբ ներպետական բարձրագույն դատական ատյանները համապարփակ եւ համոզիչ կերպով վերլուծում են դատարան մուտքի վիճարկելի սահմանափակման հստակ բնույթը, սույն Դատարանը, համապատասխան Կոնվենցիայով նախատեսված նախադեպային իրավունքի եւ դրանից բխող սկզբունքների հիման վրա, կարող էր պահանջել ներկայացնել համոզիչ հիմքեր, որոնք կարող էին տարբերվել այդ դատարանների կողմից արված եզրահանգումից՝ ներպետական իրավունքի մեկնաբանության հարցի վերաբերյալ սեփական տեսակետները փոխարինելով ներպետական դատարանների տեսակետներով եւ հակառակ իրենց տեսակետի պարզելով, որ հավանաբար առկա է եղել այնպիսի իրավունք, որը հայտնի է եղել ներպետական իրավունքում:

260. Ինչ վերաբերում է տվյալ իրավունքի «քաղաքացիական» բնույթին, Դատարանը նշել է, որ հանրային իրավունքի սուբյեկտի, այդ թվում՝ պետության եւ աշխատակցի միջեւ աշխատանքային հարաբերությունները՝ գործող ներպետական դրույթներին համապատասխան, կարող են հիմնված լինել առանձին անհատների միջեւ հարաբերությունները կարգավորող աշխատանքային իրավունքի սկզբունքների կամ քաղաքացիական ծառայության հետ կապված հարցերը կարգավորող հատուկ կանոնների ամբողջության վրա: Գոյություն ունեն նաեւ խառը համակարգեր, որտեղ մասնավոր ոլորտում կիրառելի աշխատանքային իրավունքի կանոնները համատեղվում են քաղաքացիական ծառայության նկատմամբ կիրառելի որոշակի հատուկ կանոնների հետ:

261. Ինչ վերաբերում է քաղաքացիական ծառայության պետական ծառայողներին, Վիլիո Էսկելինենը եւ այլք գործում սահմանված չափանիշների համաձայն՝ ... պատասխանող պետությունը Դատարանի առջեւ չի կարող հիմնվել միայն դիմումատուի՝ որպես քաղաքացիական ծառայող կարգավիճակի վրա՝ խուսափելով 6-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունից, քանի դեռ չեն կատարվել երկու պայմանները: Առաջին՝ պետությունն իր ներպետական օրենսդրությամբ պետք է ուղղակիորեն բացառի խնդրո առարկա պաշտոնի կամ անձնակազմի՝ տվյալ կատեգորիայի մուտքը դատարան: Երկրորդ՝ բացառումը պետք է արդարացվի պետության շահերի վրա հիմնված օբյեկտիվ հիմքերով: Որպեսզի բացառումն արդարացված լինի, պետության համար բավարար չէ այն հիմնավորումը, որ տվյալ քաղաքացիական ծառայողը մասնակցում է պետական իշխանության իրականացմանը, կամ բավարար չէ այն հիմնավորումը, որ առկա է վստահության եւ հավատարմության վրա հիմնված հատուկ կապ քաղաքացիական ծառայողի եւ գործատու հանդիսացող պետության միջեւ: Պետությունը պետք է նաեւ ցույց տա, որ քննվող վեճի առարկան կապված է պետական իշխանության իրականացման հետ, եւ որ այն կասկածի տակ է դրել այդ հատուկ կապը: Այսպիսով, սովորական աշխատանքային վեճերում, մասնավորապես՝ կապված աշխատավարձերի, նպաստների կամ նմանատիպ իրավունքների հետ, 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների բացառումը սկզբունքորեն չի կարող արդարացված լինել՝ պայմանավորված տվյալ քաղաքացիական ծառայողի եւ պետության միջեւ փոխհարաբերության հատուկ բնույթով: Փաստացի առկա է լինելու 6-րդ հոդվածի կիրառման կանխավարկած: Առաջին՝ պատասխանող պետությունը պետք է ցույց տա, որ քաղաքացիական ծառայող հանդիսացող դիմումատուն ներպետական իրավունքով դատարան մուտքի իրավունք չունի, եւ երկրորդ՝ քաղաքացիական ծառայողի՝ 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքների բացառումն արդարացված է ...

262. Մինչդեռ Դատարանը Վիլիո Էսկելինենը եւ այլք գործում նշել է, ... որ այդ գործով իր հիմնավորումները սահմանափակվում էին քաղաքացիական ծառայողների կարգավիճակով, այն ընդլայնել է այդ վճռում հաստատված չափանիշների կիրառությունը՝ ընդգրկելով դատավորների վերաբերյալ տարբեր վեճեր: Այն նշել է, որ թեեւ դատական համակարգը սովորական քաղաքացիական ծառայության մաս չէ, այն համարվում է պետական ծառայությանը բնորոշ մաս ...

263. Դատարանը կիրառել է Վիլիո Էսկելինենը եւ այլք գործում շարադրված տվյալները ... դատավորների վերաբերյալ բոլոր վեճերի նկատմամբ, այդ թվում՝ դատավորների վերաբերյալ այն վեճերի, որոնք կապված են հավաքագրման (նշանակման) ..., կարիերայի (առաջխաղացման) ..., փոխանցման ..., կասեցման, կարգապահական վարույթի ..., ինչպես նաեւ պաշտոնանկության ..., կարգապահական լուրջ խախտման համար մեղադրվելու դեպքում՝ աշխատավարձի նվազեցման ..., պաշտոնից ազատման հետ (օրինակ՝ Գերագույն դատարանի նախագահին, Վերաքննիչ դատարանի նախագահին կամ Մարզային դատարանի փոխնախագահին), որոնք միեւնույն ժամանակ կարող էին մնալ դատավորի պաշտոնում ... կամ այն դատավորների նկատմամբ, որոնց օրենսդրական բարեփոխումից հետո արգելվել է իրականացնել իրենց դատական գործառույթները ... »:

2. *Վերոնշյալ սկզբունքների կիրառությունը սույն գործի նկատմամբ*

ա) Իրավունքի գոյությունը

65. Պարզելու համար, թե արդյոք դիմումատուների կողմից հաստատված իրավունքի համար առկա է որեւէ իրավական հիմք, Դատարանը պետք է միայն հաստատեր այն, թե արդյոք դիմումատուների փաստարկները բավարար չափով հիմնավոր էին, ոչ թե այն, թե արդյոք դատարան մուտք ունենալու դեպքում դրանց ելքը հաջող կլիներ (տե՛ս վերելում հիշատակված՝ Գրգեդայի գործը, § 268, Դատարանի նախադեպային իրավունքի լրացուցիչ հղումներով): Թեեւ սկզբունքորեն Կոնվենցիայով արդարադատության իրականացման հետ կապված պետական պաշտոն զբաղեցնելու որեւէ իրավունք նախատեսված չէ, այդպիսի իրավունք կարող է նախատեսված լինել ներպետական մակարդակով (համապատասխան փոփոխություններով՝ 270-րդ կետ):

66. Սույն գործով չի վիճարկվում, որ մինչև 2020 թվականի հունիսի 26-ին իրենց պաշտոնավարման ժամկետները վաղաժամկետ դադարեցնող՝ վիճարկվող սահմանադրական փոփոխություններն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն դիմումատուներն իրավունք ունեին մնալու Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում (առաջին երեք դիմումատուները) կամ տվյալ Դատարանի նախագահի պաշտոնում (չորրորդ դիմումատուն) այն դեպքում, երբ Սահմանադրության 164-րդ հոդվածի 8-րդ եւ 9-րդ կետերով սահմանված բացառիկ հիմքերից որեւէ մեկը (տե՛ս վերոնշյալ 33-րդ պարբերությունը) առկա չի եղել: Այդ պատճառով կարելի է ասել, որ մինչև այդ պահը ներպետական իրավակարգում առկա էին դրույթներ, որոնք հնարավոր էին դարձնում երեք դիմումատուների անփոփոխելիությունն իրենց դատական պաշտոններից մինչ կենսաթոշակի անցնելը՝ անկախ 2015 թվականի հիմնական սահմանադրական բարեփոխումներից, որոնք Սահմանադրական դատարանի դատավորների նշանակման, այդ թվում՝ չերկարաձգվող ֆիքսված ժամկետով պաշտոնավարման համար նոր կանոններ էին սահմանում: Ինչ վերաբերում է չորրորդ դիմումատուին, պաշտոնավարումը շարունակելու նրա իրավունքը բխում է Սահմանադրությունից եւ Ազգային ժողովի՝ նրան անորոշ ժամկետով՝ մինչև 2035 թվականին նրա կենսաթոշակի անցնելը, Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնում նշանակելու մասին 2018 թվականի մարտի 21-ի որոշումից: Նրա պաշտոնավարման ժամկետը դադարեցնելու վերաբերյալ Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարանին ուղղված հետագա պահանջն անօգուտ էր (տե՛ս վերոնշյալ 4-7-րդ, 16-րդ եւ 29-32-րդ պարբերությունները):

67. Վերոնշյալի լույսի ներքո՝ Դատարանը գտնում է, որ երեք դիմումատուները կարող էին փաստարկել, որ Հայաստանի օրենսդրության համապատասխան՝ իրենք դատական ծառայության պաշտոնում լիարժեք ժամկետով պաշտոնավարելու իրավունք ունեին, եւ որ չորրորդ դիմումատուն՝ որպես Սահմանադրական դատարանի նախագահ, իր պաշտոնավարման նկատմամբ ուներ այդ նույն իրավունքը: Կառավարության կողմից վիճարկվող այն

փաստը, թե դիմումատուների պաշտոնավարման ժամկետները դադարեցվել են այնպիսի սահմանադրական փոփոխությունների հիման վրա, որոնք ուժի մեջ մտնելուց հետո ենթակա չէին դատական վերանայման (տե՛ս վերելում՝ 58-րդ պարբերությունը), հետագարձ ուժով չէր կարող վերացնել նախկին կիրառելի կանոնների համաձայն նրանց իրավունքների վիճարկելի բնույթը: Հետևաբար սույն գործով առկա է եղել իրական եւ լուրջ վեճ այնպիսի «իրավունքի» շուրջ, որը դիմումատուները, ներպետական իրավունքին համապատասխան, կարող էին պահանջել վիճարկելի հիմքերով (տե՛ս վերելում հիշատակված Գրզեդայի գործը, §§ 285-86, եւ *Բական ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ], թիվ 20261/12, §§ 110-11, 2016 թվականի հունիսի 23):

բ) Իրավունքի «քաղաքացիական» բնույթը. Էսկելինենի գործով թեստ

68. Պարզելու ենթակա հաջորդ հարցն այն է, թե արդյոք դիմումատուների կողմից հաստատված «իրավունքը» 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով «քաղաքացիական» էր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «քաղաքացիական իրավունքներ եւ պարտավորություններ» հասկացությունը չի կարող մեկնաբանվել՝ միայն հղում կատարելով պատասխանող պետության ներպետական իրավունքին. այն Կոնվենցիայից բխող անկախ հայեցակարգ է (տե՛ս, ի թիվս բազմաթիվ օրինակների, վերելում հիշատակված՝ Գրզեդայի գործը, § 287):

(i) Էսկելինենի գործով թեստի առաջին պայմանն այն է, թե արդյոք դրա մուտքը դատարան, ներպետական իրավունքին համապատասխան, բացառված է եղել:

69. Մինչդեռ դիմումատուներն ընդունել են, որ ներպետական իրավունքով իրենց պաշտոնավարման ժամկետների դադարեցման հետ կապված իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով նրանք դատարան մուտք չեն ունեցել.

նրանք, Կառավարությանը հակառակ, վիճարկել են, որ իրենց մուտքը դատարան «ուղղակիորեն բացառված» չի եղել (տե՛ս վերելում՝ 61-րդ պարբերությունը):

70. Այնուամենայնիվ, Դատարանը վերջերս մշակել է Էսկելինենի գործով թեստի առաջին պայմանը: Այն սահմանում է, որ առաջին պայմանը կարող է կատարված համարվել այն դեպքում, երբ անկախ այդ մասին ակնհայտ դրույթի՝ ակներեւ է, որ ներպետական իրավունքն այդ տեսակի վեճի դեպքում բացառում է մուտքը դատարան (տե՛ս վերելում հիշատակված՝ Գրգեդայի գործը, §§ 291-92): Առաջին հերթին, այս պայմանը բավարարվում է այն դեպքում, երբ ներպետական իրավունքն ակնհայտորեն բացառում է մուտքը դատարան: Երկրորդ՝ նույն պայմանը կարող է բավարարվել այն դեպքում, երբ տվյալ բացառումն անուղղակի բնույթ ունի, մասնավորապես՝ այն դեպքում, երբ այն բխում է կիրառելի իրավական շրջանակի կամ իրավական կարգավորման ամբողջության համակարգային մեկնաբանությունից, ինչպես սույն գործում:

(ii) Էսկելինենի գործով թեստի երկրորդ պայմանն այն է, թե արդյոք դատարան մուտքի բացառումն արդարացված է եղել:

71. Դատարանն ընդգծում է, որ, ինչ վերաբերում է դատավորներին, «վստահության եւ հավատարմության վրա հիմնված առանձնահատուկ կապը» վկայակոչող Էսկելինենի գործով թեստի երկրորդ չափանիշը պետք է ուսումնասիրել դատական իշխանության անկախության երաշխիքների լույսի ներքո: Այդ առումով Դատարանը սահմանում է, որ քաղաքացիական ծառայողներից պահանջվող այդ երկու հասկացությունները, այն է՝ վստահության եւ հավատարմության վրա հիմնված առանձնահատուկ կապը եւ դատական իշխանության անկախությունը, հեշտությամբ համադրելի չեն: Մինչդեռ քաղաքացիական ծառայողի եւ պետության միջեւ աշխատանքային հարաբերություններն ավանդաբար սահմանվում են որպես գործադիր իշխանության նկատմամբ վստահության եւ հավատարմության վրա հիմնված հարաբերություններ այնքան ժամանակ, քանի դեռ առկա է պետության

աշխատակիցների կողմից պետական քաղաքականություն իրականացնելու պահանջը. նույնը չի կարելի ասել դատական իշխանության ներկայացուցիչների մասին, որոնք այլ՝ ավելի անկախ դեր ունեն Կառավարության ապօրինությունների եւ պաշտոնեական դիրքի չարաշահման դեպքերի ուսումնասիրություններ կատարելու իրենց պարտավորության շնորհիվ: Պետության առջեւ նրանց գործառնական դերը կարող է ընկալվել դատական անկախությանը հատուկ էական երաշխիքների լույսի ներքո: Հետեւաբար, վկայակոչելով այն վստահությունը եւ հավատարմությունը, որոնք նրանք պետք է պահպանեն, մենք ի նկատի ունենք հավատարմությունն օրենքի գերակայության սկզբունքի եւ ժողովրդավարության, այլ ոչ թե պետական իշխանությունը կրողների նկատմամբ: Դատավորի եւ պետության միջեւ առկա աշխատանքային հարաբերությունների բարդ կողմը դատական իշխանության անդամների համար անհրաժեշտություն է առաջացնում իրենց պարտավորություններն իրականացնելիս բավարար չափով հեռու մնալ պետության մյուս ճյուղերից, որպեսզի կարողանան որոշումներ կայացնել՝ մեծապես հիմնվելով իրավունքի եւ արդարության պահանջների վրա՝ առանց վախի կամ կողմնակալության: Սխալ կլինի ենթադրել, թե դատավորները կարող են պաշտպանել օրենքի գերակայության սկզբունքը եւ կիրառել Կոնվենցիան, եթե ներպետական իրավունքը զրկի նրանց Կոնվենցիայի հոդվածներով սահմանված երաշխիքներից այնպիսի հարցերի առնչությամբ, որոնք ուղղակիորեն ազդում են նրանց անձնական անկախության եւ անաչառության վրա (տե՛ս վերելում հիշատակված՝ Գրզեդայի գործը, § 264, Բիլգենն ընդդեմ Թուրքիայի, թիվ 1571/07, § 79, 2021 թվականի մարտի 9, եւ Գյումենյուկը եւ այլք ընդդեմ Ուկրաինայի, թիվ 11423/19, § 66, 2021 թվականի հուլիսի 22):

72. Սա նշանակում է, որ Դատարանն անհրաժեշտ է համարում, որ սույն գործը, ի տարբերություն Դատարանի կողմից քննվող նմանատիպ նախկին գործերի, որոնք ներառում էին ընդհանուր իրավասության դատարանների եւ գերագույն դատարանների դատավորներին (տե՛ս, *inter alia*, վերելում

հիշատակված՝ Բիլգենի գործը, § 79, Բրոդան եւ Բոջարան ընդդեմ Լեհաստանի, թիվ 26691/18 եւ 27367/18, § 120, 2021 թվականի հունիսի 29, եւ վերետում հիշատակված Գյումենյուկը եւ այլք, § 66), վերաբերի Սահմանադրական դատարանի դատավորներին: Դատարանը հաճախ է ընդգծել սահմանադրական դատարանների առանձնահատուկ դերը եւ կարգավիճակը (տե՛ս Զյուսմանն ընդդեմ Գերմանիայի, § 37,1996 թվականի սեպտեմբերի 16, *զեկույցներ* 1996-IV, եւ որպես ավելի թարմ օրինակ՝ Քսերո Ֆլոր Լեհաստան *սպ.զ օ.օ.-ն ընդդեմ Լեհաստանի*, թիվ 4907/18, § 193, 2021 թվականի մայիսի 7): Իսկապես, անկախ այն փաստից, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն անդրադառնում է Սահմանադրական դատարանին եւ սովորական դատարաններին նույն գլխում (հակառակ վերոնշյալ 53-րդ պարբերությունում վկայակոչված՝ 2015 թվականի եզրակացության 145-րդ կետում սահմանված Վենետիկի հանձնաժողովի այն խորհրդի, որ Սահմանադրական դատարանը պետք է առանձնացված լինի այլ դատարաններից), պարզ է, որ Սահմանադրական դատարանը Հայաստանի իրավական համակարգում առանձնահատուկ կարգավիճակ ունի: Հատկանշական է, որ Բարձրագույն դատական խորհուրդը, որը ստեղծվել է՝ ապահովելու համար դատավորների եւ դատարանների անկախությունը, Սահմանադրական դատարանի նկատմամբ որեւէ լիազորություն չունի (տե՛ս վերոնշյալ 42-րդ պարբերությունը): Սահմանադրական դատարանն ապահովում է Դատավորների անկախությունը, որը բացառիկ իրավազորություն ունի կարգապահական, դատավորներին՝ իրենց անձեռնմխելիությունից զրկելու եւ նրանց լիազորությունները դադարեցնելու հարցերում (տե՛ս Սահմանադրության 164-րդ հոդվածը՝ մեջբերված վերոնշյալ 33-րդ պարբերությունում): Հետեաքար Բարձրագույն դատական խորհրդի միջամտությունը սույն գործում աննշան էր (այս առնչությամբ տե՛ս Դատավորների կանոնադրության մասին եվրոպական խարտիան՝ մեջբերված վերոնշյալ 46-րդ պարբերությունում, որի 1.3 եւ 1.4 կետերը նախատեսում են այդ մարմնի միջամտությունը եւ այդ մարմնին բողոքարկելու իրավունքը):

73. Սույն գործի մեկ այլ առանձնահատկությունն այն է, որ դիմումատուների՝ որպես դատավորներ (առաջին երեք դիմումատուներ) կամ Սահմանադրական դատարանի նախագահի (չորրորդ դիմումատու) պաշտոնավարման ժամկետներն ավարտվել են սահմանադրական փոփոխությամբ, որն ավելի ընդարձակ սահմանադրական բարեփոխումների մի մասն էր կազմում: Այդ պատճառով ընդհանուր իրավասության որեւէ դատարանի միջամտությունը նմանապես աննշան էր (ի տարբերություն Օվչարենկոն եւ Կոլոսն ընդդեմ Ուկրաինայի գործի, թիվ 27276/15 եւ 33692/15, 2023 թվականի հունվարի 12՝ առանձին Սահմանադրական դատարանների դատավորների՝ կարգապահական խախտման պատճառով պաշտոնանկության վերաբերյալ, որը ենթակա էր վիճարկման դատարաններում):

74. Այս առումով Դատարանն արդեն որոշել է, որ Կոնվենցիան չի խոչընդոտում, որ պետությունները դատական համակարգի բարեփոխում իրականացնելու նպատակով օրինական եւ անհրաժեշտ որոշումներ կայացնեն, եւ որ Կառավարության՝ դատական բարեփոխումներ իրականացնելու լիազորությունը չի կարող կասկածի տակ դրվել՝ պայմանով, որ դատական համակարգի որեւէ բարեփոխում չխաթարի դատական համակարգի եւ դրա ղեկավար մարմինների անկախությունը (տե՛ս վերելում հիշատակված երկու՝ Գյումենյուկը եւ այլք, § 43, եւ Գրզեդայի գործը, § 323): Ինչ վերաբերում է առկա նյութերին, սույն գործով Դատարանը դիմումատուների փաստարկների օգտին համոզիչ ապացույցներ չի գտնում այն մասին, որ վիճարկվող փոփոխությունն ուղղված է եղել կամ պատճառ է դարձել խաթարելու Սահմանադրական դատարանի լեգիտիմությունը կամ անկախությունը, եւ որ այն նպատակաուղղված է եղել հենց նրանց (ի հակադրություն դրա՝ վերելում հիշատակված՝ Բակայի գործը, § 117, եւ Գրզեդայի գործը, § 299): Այդ իմաստով այն այնուհետեւ հղում է կատարում Վենետիկի հանձնաժողովի հաջորդող եզրակացություններին, որը բազմակողմանիորեն քննում էր այդ բարեփոխման տարբեր կողմերը (տե՛ս վերոնշյալ 53-55րդ պարբերությունները):

75. Ի սկզբանե, 2015 եւ 2020 թվականների եզրակացություններով հաստատվել է, որ դատավորների պաշտոնավարման տասներկուամյա չերկարաձգվող ժամկետի ներմուծումը լիովին «համահունչ» էր եվրոպական գործելակերպին: Այն նոր ընթացակարգը, որին համապատասխան Սահմանադրական դատարանի նախագահն այլեւս չպետք է ցմահ նշանակվեր Ազգային ժողովի կողմից, ինչպես նշանակվել էր չորրորդ դիմումատուն, այլ պետք է ընտրվեր դատավորների կողմից վեց տարի չերկարաձգվող ժամկետով, համարվում էր «լավ երաշխիք Դատարանի անկախության համար»: 2019 թվականի իր եզրակացության մեջ նշված էր, որ Սահմանադրական դատարանի բոլոր դատավորները պետք է ունենան նույն կարգավիճակը՝ անկախ այն բանից՝ նրանք նշանակված են եղել 2015 թվականի բարեփոխումից առաջ, թե հետո: Այնուամենայնիվ, առկա էին մտահոգություններ իննից յոթ դատավորների կողմից կենսաթոշակի անցնելու հավանականության կապակցությամբ, որոնք նշանակվել էին այնպես, ինչպես սույն դիմումատուները՝ 2018 թվականի ապրիլի 9-ից առաջ: Վենետիկի հանձնաժողովի կարծիքով՝ սա կարող էր ազդել այդ դատարանի արդյունավետ գործունեության վրա (տե՛ս 2019 թվականի եզրակացության 60-րդ պարբերությունը՝ մեջբերված վերոնշյալ 54-րդ պարբերությունում):

76. Այդ համատեքստում Դատարանը նաեւ կարելիություն է տալիս Հայաստանում քսանհինգ տարի տեւած սահմանադրական զարգացումների գնահատման գործընթացի՝ Վենետիկի հանձնաժողովի կողմից տրված ընդհանուր գնահատմանը: Մասնավորապես 2020 թվականի եզրակացությունում այն միանշանակ կերպով նշել է, որ գործընթացը «շարունակական պայքար էր ժողովրդավարական չափորոշիչների բարելավման եւ օրենքի գերակայության սկզբունքի խթանման» համար, եւ արտահայտել է իր «մտահոգությունը գործող դատավորների անկախության համար» (տե՛ս 2020 թվականի եզրակացության 32-րդ պարբերությունը՝ մեջբերված 55-րդ պարբերությունում):

77. Ավելին, Դատարանը հիմք չի ունեցել չհամաձայնելու Վենետիկի հանձնաժողովի այն եզրահանգման հետ, որ վիճարկվող սահմանադրական փոփոխությունները օրինական նպատակ էին հետապնդում, քանի որ դրանց հիմնական խնդիրն էր ապահովել, որ Սահմանադրական դատարանի անկախության վերաբերյալ 2018 թվականին ուժի մեջ մտած բարձր ժողովրդավարական չափորոշիչները հնարավորինս շուտ արդյունք տային, եւ որ Սահմանադրական դատարանի բոլոր դատավորներն ունենային նույն կարգավիճակը՝ անկախ նրանց նշանակման ժամանակահատվածից (տե՛ս վերոնշյալ 55-րդ պարբերությունում հիշատակված Եզրակացությունը, 45-48-րդ կետեր, եւ հակադրի՛ր վերելում հիշատակված՝ Գրզեդայի գործի հետ, 348-րդ կետ): Այդ տեսանկյունից Դատարանը նաեւ նշում է, որ եթե 2020 թվականի փոփոխություններն ուժի մեջ չմտնեին, 2015 թվականի բարեփոխման լիարժեք իրականացումը չափազանց կերկարաձգվեր, քանի որ մինչեւ քսան տարի կպահանջվեր, որ իշխանությունները հասնեին այն բոլոր նպատակներին, որոնց ցանկանում էին հասնել: Օրինակ՝ չորրորդ դիմումատուն կմնար Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնում մինչեւ 2035 թվականը:

78. Այդ պատճառով իշխանությունները ստիպված էին բարդ ընտրություն կատարել՝ կշեռքի նժարին դնելով մի կողմից՝ պետության էական շահը՝ դատավորների նշանակման ընթացակարգի ընդհանուր վերանայման երկարատեւ եւ բարդ ընթացակարգն ընդգրկող սահմանադրական բարեփոխումներն իրականացնելիս եւ պաշտոնավարման չերկարաձգվող ֆիքսված ժամկետը ներմուծելիս, մյուս կողմից՝ դատավորների անփոփոխելիության սկզբունքը՝ ի դեմս դիմումատուների, մինչեւ կենսաթոշակի անցնելը պաշտոնավարման ժամկետը շարունակելու եւ կարգավիճակը պահպանելու իրենց անհատական իրավունքը (տե՛ս համապատասխան փոփոխություններով՝ Գուդմունդուր Անդրի Աստրադսոնն ընդդեմ Իսլանդիայի [ՄՊ], թիվ 26374/18 գործը, §§ 239-40, 2020 թվականի դեկտեմբերի 1, որտեղ Դատարանը գտնում էր, որ դատավորների անփոփոխելիության սկզբունքն

իրենց պաշտոնավարման ժամկետում բացարձակ չէր եւ որոշակի հանգամանքներում, օրինակ՝ երբ Կոնվենցիայի հիմնարար սկզբունքների հակասություն էր առաջանում, ենթակա չէր կատարման ամեն գնով): Ճշգրիտ հավասարակշռության հասնելու իշխանությունների մտահոգությունն արտացոլվում էր 2020 թվականի հունիսի փոփոխության համատեքստում՝ Վենետիկի հանձնաժողովին ուղղված իրենց հարցերում (տե՛ս վերոնշյալ 55-րդ պարբերությունը): Մինչդեռ Հանձնաժողովն ընդունում էր, որ առաջարկվող մոտեցման օգտին լավ փաստարկներ կային, այն համարում էր, որ Սահմանադրական դատարանի կազմի թարմացումը պետք է կատարվեր աստիճանաբար եւ ուղեկցվեր իշխանությունների կողմից սահմանվող որոշակի անցումային ժամանակահատվածով: Անցումային շրջանը պետք է առաջարկվեր նաեւ Դատարանի նախագահի, այն է՝ չորրորդ դիմումատուի պաշտոնավարման ժամկետը դադարեցնելու մասով: Իշխանություններն իրենց կողմից որոշեցին դիմումատուների մասով չկիրառել նման որեւէ ժամանակահատված: Դատարանի կարծիքով՝ թեեւ սույն որոշումը հակասում է Վենետիկի հանձնաժողովի առաջարկներին, այն ինքնին չի կարող խափանել սահմանադրական բարեփոխումներով հետապնդվող նպատակների լեգիտիմությունը, ինչն ի վերջո իրականացվել է 2020 թվականի հունիսի փոփոխությամբ:

79. Ինչ վերաբերում է դիմումատուների այն փաստարկին, որ իրենց պաշտոնավարման ժամկետները դադարեցնող վիճարկվող սահմանադրական փոփոխությունը պետք է ենթակա լիներ նախնական սահմանադրական վերանայման, Դատարանը կարող էր վերահաստատել, որ 6-րդ հոդվածը չի երաշխավորում դատարան մուտքի իրավունքը՝ օրենսդիր իշխանության կողմից ընդունված օրենքն անվավեր ճանաչելու կամ չեղարկելու իրավասությամբ (տե՛ս, օրինակ՝ Փոստին եւ Ռահկոն ընդդեմ Ֆինլանդիայի, թիվ 27824/95 գործը, § 52, ՄԻԵԴ 2002-VII, եւ Սակսկորբուրգուսկին եւ Չրոբոկն ընդդեմ Բուլղարիայի, թիվ 38948/10 եւ 8954/17, § 272 գործերը, 2021 թվականի սեպտեմբերի 7): Դրանից բացի, այդ դրույթից չի կարող բխել նաեւ անհատի իրավունքը՝ խթանելու օրենքի սահմանադրական վերանայման՝ խորհրդարանական մարմնի որոշումը:

Ամեն դեպքում Դատարանը նշում է, որ համապատասխան պահի Սահմանադրական դատարանի գործող ինը դատավորներից յոթը (այն է՝ դատավորների մեծամասնությունը) տուժել են խնդրո առարկա սահմանադրական փոփոխության արդյունքում:

80. Այս առումով պետք է ընդգծել, որ Դատարանի նախադեպային իրավունքին համապատասխան պետք է ինքնաբացարկ հայտնի այն դատավորը, որի հետ կապված առկա է օրինական հիմք՝ ենթադրելու, որ նրա կողմից կարող է անաչառության պակաս նկատվել (տե՛ս Միկալեֆն ընդդեմ Մալթայի [ՄՊ], թիվ 17056/06, § 98, ՄԻԵԴ 2009): Դատավորների անաչառությունը (որեւէ մեկը չի կարող լինել իր անձնական գործով դատավոր) իսկապես օրենքի գերակայության սկզբունքով ղեկավարվող պետության հիմնական սկզբունքներից մեկն է: Դատարանը փաստացի հայտնաբերել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում այն դեպքում, երբ դատական կոլեգիայի որոշ անդամներ օրենքին համապատասխան որակազրկվել են գործին մասնակցությունից (տե՛ս վերելում հիշատակված՝ Գուդմոնդուր Անդրի Աստրադսոնի գործը, § 217, եւ գործում հիշատակված մարմինները):

81. Ճիշտ է, որ Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքները նախատեսում են, որ արտակարգ հանգամանքները կարող են պահանջել այդ սկզբունքից շեղում (տե՛ս վերոնշյալ 50-51-րդ պարբերությունները): Դատարանը նաեւ մատնանշում է Վենետիկի հանձնաժողովի տեսակետներն այն հանգամանքների հավանական օրինակների վերաբերյալ, երբ Սահմանադրական դատարանի դատավորները, չնայած օրենսդրությամբ հակառակ եզրակացության սուբյեկտ լինելու, չպետք է զրկված լինեն գործը քննելու հնարավորությունից (տե՛ս վերոնշյալ 52-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքներով սահմանված անհրաժեշտության դոկտրինն այլ պարագայում որակազրկված դատավորին հնարավորություն կտա քննել եւ գործով որոշում կայացնել միայն այն դեպքում, երբ դա չանելն անարդարության պատճառ կարող է դառնալ, մասնավորապես՝ այն դեպքում, երբ գործի քննությունը հետաձգելը կամ ոչ ճիշտ քննությունը լուրջ դժվարություն կարող է

առաջացնել, սակայն դա կարող է տեղի ունենալ «հազվադեպ եւ հատուկ դեպքերում» (տե՛ս վերոնշյալ 51-րդ պարբերությունում վկայակոչված փաստաթուղթը, §100): Իր մասով Վենետիկի հանձնաժողովը, վկայակոչելով այդ դոկտրինը, կարծիք է հայտնել այն մասին, որ դա միայն վերաբերում է այնպիսի դեպքերին, երբ որակագրկումը կարող է արդարադատության մերժման պատճառ դառնալ՝ նշելով, որ գործը վճռելիս մեծ շեղումը կարող է հիմնավորել որակագրկումը, մինչդեռ այնպիսի իրավիճակներում, երբ սահմանադրականության կամ հակասահմանադրականության հարցը բավականին պարզ է, եւ երբ դատավարությունը տվյալ դատավորի կողմից որեւէ սուբյեկտիվ գնահատական չի ներառում, պետք է գերիշխող լինի Սահմանադրական դատարանի՝ որպես ժողովրդավար հաստատության արդյունավետ գործունեությունը (տե՛ս վերելում՝ 52-րդ պարբերությունը):

82. Սա այդ դեպքերից մեկը չէ: Բացի այդ, Դատարանի կարծիքով՝ այն չի ներառում վերելում մատնանշված «անհրաժեշտության» հանգամանքները: Հատկանշական է, որ վիճարկվող սահմանադրական փոփոխությունը անբարենպաստ հետեւանքներ ունեցավ միայն դիմումատուների եւ նրանց սեփական շահերի համար: Նրանց պաշտոնավարման ժամկետի դադարեցումը որեւէ ազդեցություն չի ունեցել Սահմանադրական դատարանի դատավորների հետագա մանդատների վրա, քանի որ տասներկու տարվա չերկարաձգվող պաշտոնավարման ժամկետն արդեն ներմուծված է եղել 2015 թվականի սահմանադրական փոփոխությամբ, որն ուժի մեջ է եղել՝ սկսած 2018 թվականի ապրիլի 9-ից, այն է՝ սույն գանգատի առաջացմանը նպաստող իրադարձություններից մոտ երկու տարի առաջ:

83. Հետեւաբար, անգամ եթե ենթադրենք, թե անհրաժեշտության դոկտրինը համահունչ է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների հետ (տե՛ս Հարաբինն ընդդեմ Սլովակիայի, թիվ 58688/11 գործը, § 139, 2012 թվականի նոյեմբերի 12, որտեղ տվյալ հարցը նույնպես բաց է մնացել), Դատարանը համարում է, որ անաչառության սկզբունքի նկատմամբ հարգանքը (*nemo iudex in causa sua* (որեւէ մեկը չի կարող լինել իր գործով

դատավոր)) գործնականում չէր կարող համատեղելի լինել դիմումատուների կողմից Սահմանադրական դատարան մուտքի իրավունքն ապահովելու հետ:

84. Հաշվի առնելով սույն գործով առանձնահատուկ հանգամանքները՝ հատկանշական է, որ այն փաստը, որ դիմումատուները Սահմանադրական դատարանի՝ Հայաստանի դատական համակարգում հատուկ կարգավիճակ ունեցող բարձր դատարանի դատավորներ էին, եւ որ նրանց պաշտոնավարման ժամկետները դադարեցվել էին սահմանադրական փոփոխությամբ, որն հատուկ ուղղված չէր նրանց (հակադրի՛ր վերելում հիշատակված՝ Բակայի գործի հետ, §117, Գրգեդայի գործի, § 299 եւ *Օվչարենկոն եւ Կոլոսը գործի հետ*, § 113), Դատարանը գտնում է, որ դատարան մուտքից զրկելն օբյեկտիվորեն արդարացված էր Էսկելինենի գործով թեստի երկրորդ պայմանի նպատակներով:

Գ) Եզրակացություն

85. Քանի որ Էսկելինենի գործով թեստի բոլոր պայմանները բավարարված են, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի չէ: Հետեւաբար գանգատն այս մասով պետք է մերժվի՝ Կոնվենցիայի դրույթների հետ *ratione materiae* համարվելով ոչ համատեղելի՝ 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետին եւ 4-րդ կետին համապատասխան:

- II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ՝ ՎԵՐՑՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ԵՒ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 14-ՐԴ ԵՒ 18-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ա. Կոնվենցիայի 8-րդ հոդվածը

1. Կողմերի փաստարկները

86. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուները ցույց չեն տվել, որ իրենց պաշտոնավարման ժամկետների դադարեցումը լրջորեն ազդել է իրենց

անձնական կյանքի վրա: Վարչապետը եւ մի շարք հայ պաշտոնյաներ պարբերաբար նշել են, որ վիճարկվող սահմանադրական փոփոխությունները նպատակ ունենին ներդնել Սահմանադրական դատարանի նոր մոդելը եւ չէին կարող մեկնաբանվել որպես այդ Դատարանի դատավորներից որեւէ մեկի անձը թիրախավորող: Հետեւաբար, *ratione materiae*, սույն բողոքն անհամատեղելի էր:

87. Դիմումատուները ներկայացրել են երկար դիտարկումներ սույն բողոքի՝ ըստ էության քննության եւ մասնավորապես՝ վիճարկվող միջոցի օրինականության վերաբերյալ: Ինչ վերաբերում է Կառավարության առարկությանն այն մասին, որ սույն բողոքն *ratione materiae* անհամատեղելի էր, դիմումատուները պնդում էին, որ 8-րդ հոդվածը կիրառելի էր դատավորի պաշտոնանկության դեպքում: Նրանք նաեւ հաստատել են, ոչ հայ պաշտոնյաների կողմից արված՝ Սահմանադրական դատարանը եւ ընդհանուր առմամբ դատական համակարգը քննադատող հայտարարությունները (տե՛ս վերոնշյալ 10-րդ եւ 12-14-րդ պարբերությունները) արատավորել են իրենց համբավը՝ ինքնին 8-րդ հոդվածը համարելով կիրառելի: Այս համատեքստում չորրորդ դիմումատուն անդրադարձել է իր դեմ հարուցված քրեական վարույթին (տե՛ս վերոնշյալ 19-րդ պարբերությունը):

2. Դատարանի գնահատականը

88. Սույն գործի վերաբերյալ համապատասխան նախադեպային իրավունքը վերահաստատվել է Դենիսովն ընդդեմ Ուկրաինայի [ՄՊ] գործում, թիվ 76639/11, §§ 92-117, 2018 թվականի սեպտեմբերի 25: Մասնավորապես Դատարանը սահմանել է, որ աշխատանքային վեճերը *per se* (ըստ էության) Կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով դուրս չեն «անձնական կյանքի» շրջանակից: Կան անձնական կյանքին բնորոշ որոշ հարցեր, որոնց վրա կարող են ազդել պաշտոնից ազատման, պաշտոնի իջեցման, մասնագիտությամբ աշխատանքի չընդունելու կամ նմանատիպ այլ ոչ բարենպաստ միջոցների հետեւանքով առաջացած վեճերը: Այս հարցերը ներառում են՝ (i) դիմումատուի «մերձավոր

շրջապատը», (ii) դիմումատուի՝ այլոց հետ հարաբերություններ հաստատելու եւ զարգացնելու հնարավորությունը, եւ (iii) դիմումատուի սոցիալական եւ մասնագիտական հեղինակությունը: Սովորաբար այդպիսի վեճի պատճառով անձնական կյանքի հետ կապված խնդիր առաջանում է երկու դեպքում՝ կա՛մ վիճարկվող միջոցների հիմքում ընկած պատճառներով (պատճառաբանության վրա հիմնված մոտեցումը), կա՛մ որոշ դեպքերում անձնական կյանքի վրա ազդող հետեւանքների պատճառով (հետեւանքների վրա հիմնված մոտեցումը): Եթե կիրառվում է հետեւանքների վրա հիմնված մոտեցումը, ապա վերը նշված բոլոր հարցերի նկատմամբ լրջության շեմը կարելի է նշանակություն է ստանում: Դիմումատուն պետք է համոզիչ կերպով ցույց տա, որ իր գործով հասել են այդ շեմին: Դիմումատուն պետք է ներկայացնի վիճարկվող միջոցի հետեւանքները հիմնավորող ապացույցներ: Դատարանը կընդունի միայն այն, որ 8-րդ հոդվածը կիրառելի է այն դեպքում, երբ այդ հետեւանքները շատ լուրջ են եւ էականորեն ազդում են նրա անձնական կյանքի վրա: Դատարանը սահմանել է ենթադրյալ խախտումների ծանրության աստիճանը կամ դրանց լրջությունը որպես կարգավորիչ բնույթ կրող տարբեր համատեքստերում գնահատելու չափորոշիչներ: Դիմումատուի ապրումները պետք է գնահատվի՝ համեմատելով նրա կյանքը տվյալ միջոցից առաջ եւ հետո: Դատարանը նաեւ համարել է, որ աշխատանքային գործերում հետեւանքների լրջությունը որոշելիս նպատակահարմար է գնահատել դիմումատուի կողմից պահանջվող սուբյեկտիվ ընկալումները կոնկրետ գործում առկա օբյեկտիվ հանգամանքների ֆոնի վրա: Այս վերլուծությունը պետք է ներառեր ենթադրյալ միջոցի ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական ազդեցությունը: Այնուամենայնիվ, դիմումատուին մնում է սահմանել եւ հիմնավորել իր ապրումների բնույթն ու չափը, որը պետք է պատճառահետեւանքային կապ ունենա վիճարկվող միջոցի հետ:

89. Սույն գործով առկա չէ որեւէ նշում այն մասին, որ «անձնական կյանքի» հետ կապված որեւէ հարց հիմք է հանդիսացել դիմումատուների պաշտոնավարման ժամկետի դադարեցման համար: Հետեւաբար Դատարանը

նպատակահարմար է գտնում շարժվել հետեւանքների վրա հիմնված մոտեցմամբ եւ քննել, թե արդյոք վիճարկվող միջոցները բավականաչափ լուրջ բացասական հետեւանքներ կարող են ունենալ դիմումատուների անձնական կյանքի վրա, մասնավորապես, երբ հարցը վերաբերում է «մերձավոր շրջապատին», այլոց հետ հարաբերություններ հաստատելու եւ զարգացնելու հնարավորություններին եւ նրանց համբավին:

90. Առաջին՝ դիմումատուները չեն պնդել, ինչպես նաեւ չեն հիմնավորել, որ իրենց պաշտոնավարման ժամկետների դադարեցումն իրենց եկամտի էական նվազեցման պատճառ է դարձել: Այս առումով Դատարանը նշում է, որ չորրորդ դիմումատուն, այլեւս չլինելով Սահմանադրական դատարանի նախագահ, շարունակում է պաշտոնավարել տվյալ Դատարանի դատավորի պաշտոնում (տե՛ս վերոնշյալ 27-րդ պարբերությունը), եւ մյուս դիմումատուներն իրավունք ունեն լրիվ թոշակ ստանալու՝ անկախ իրենց տարիքից (տե՛ս վերոնշյալ 36-րդ պարբերությունը): Ավելին, առկա չեն այլ ցուցանիշներ, որոնց համաձայն դիմումատուների անձնական կյանքի «մերձավոր շրջապատի» վրա ազդել է նրանց պաշտոնավարման ժամկետների դադարեցումը (տե՛ս, օրինակ՝ Ջ.Բ.-ն եւ այլք ընդդեմ Հունգարիայի (դեկ.), թիվ 45434/12, § 132, 2018 թվականի նոյեմբերի 27, եւ հակադրի՛ր Ջոջայն ընդդեմ Ալբանիայի, թիվ 15227/19, § 363, 2021 թվականի փետրվարի 9):

91. Անդրադառնալով այլոց հետ հարաբերություններ հաստատելու եւ պահպանելու հարցին՝ չորրորդ դիմումատուի՝ Սահմանադրական դատարանի նախագահի իր պաշտոնից պաշտոնանկությունը պատճառ չի դարձել, որ նրան զրկեն իր մասնագիտությունից: Նա շարունակել է պաշտոնավարել նույն դատարանում որպես դատավոր: Դրանից հետեւում է, որ չնայած կարող են վտանգված լինել իր հարաբերությունները, այդ թվում՝ մասնագիտական բնույթի հարաբերություններ հաստատելու եւ դրանք պահպանելու իր հնարավորությունները, փաստացի հիմքեր չկան եզրակացնելու, որ այդ ազդեցություններն էական են եղել (տե՛ս վերելում հիշատակված՝ Դենիսովի

գործը, § 123): Ինչ վերաբերում է մյուս դիմումատուներին, բավարար է նշել, որ դիմումատուներն այս կապակցությամբ որեւէ մեղադրանք չեն առաջադրել (տե՛ս, օրինակ, վերելում հիշատակված՝ Զ.Բ.-ն եւ այլք, § 133, եւ Կամելիա Բոգդանն ընդդեմ Ռումինիայի, թիվ 36889/18, § 89, 2020 թվականի հոկտեմբերի 20): Դատարանը նաեւ որոշել է, որ պաշտոնանկությունն ինքնաբերաբար խնդիր չի կարող առաջացնել անձնական կյանքում: Հետեւանքների վրա հիմնված՝ 8-րդ հոդվածով սահմանված մոտեցման բնորոշ առանձնահատկությունն այն է, որ դիմումատուի կողմից պետք է ներկայացվի համոզիչ ապացույց, որը ցույց է տալիս խստության շեմը (տե՛ս վերելում հիշատակված՝ Դենիսովի գործը, §§ 113-14):

92. Մնում է ուսումնասիրել, թե արդյոք վիճարկվող միջոցն այնպես է արատավորել դիմումատուների համբավը, որ այն լուրջ ազդեցություն է ունեցել այն հարգանքի վրա, որը նրանք վայելում էին մյուսների կողմից, ինչի հետեւանքով այն լուրջ ազդեցություն է ունեցել հասարակության հետ նրանց փոխգործակցության վրա:

93. Դիմումատուները բողոքել էին, որ տարբեր հայ պաշտոնյաների կողմից արված՝ Սահմանադրական դատարանը քննադատող հայտարարությունները վնաս են հասցրել նրանց հեղինակությանը: Դատարանը նշում է, որ, ինչ վերաբերում է սույն դիմումատուների մասնագիտական գործունեությանը կամ նրանց անձնական որակներին, բարոյական արժեքներին կամ բնավորությանը, ներպետական մարմինների կողմից արված անհատականացված բացասական դիտողությունների վերաբերյալ որեւէ ապացույց առկա չէ (տե՛ս վերելում հիշատակված՝ Զ.Բ.-ն եւ այլք, §136, հակադրի՛ր Ալեքսանդր Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի գործի հետ, թիվ 21722/11, ՄԻԵԴ 2013, որտեղ դիմումատուն ենթարկվել է քննադատության, եւ նրա նկատմամբ կարգապահական սանկցիա է նշանակվել որպես դատավոր՝ իր գործունեության համար): Այն այնուհետեւ նշում է, որ դիմումատուները չեն հիմնավորել, թե մինչեւ «Թավշյա հեղափոխությունը» նշանակված դատավորների նկատմամբ քննադատություններն ինչպես են ընդհանուր առմամբ ազդել նրանց անձնական համբավի վրա, կամ ինչպես են

դրանք իրենց մասնագիտական կամ սոցիալական միջավայրում լուրջ վերապահումների պատճառ դարձել: Ի վերջո, նրանք որեւէ այլ անձնական հանգամանքներ չեն ներկայացրել՝ նշելով, որ իրենց պաշտոնավարման ժամկետների դադարեցումը լուրջ ազդեցություն է ունեցել իրենց անձնական կյանքի վրա: Դատարանը ներկայացրել է չորրորդ դիմումատուի այն փաստարկը, որ նրա դեմ հարուցված քրեական վարույթն արատավորել է նրա համբավը (տե՛ս վերելում՝ 87-րդ պարբերությունը), սակայն այն ոչ տեղին է համարում, քանի որ դրանք վերաբերում էին որպես Արդարադատության նախարար եւ ոչ թե որպես Սահմանադրական դատարանի դատավոր իր պաշտոնավարման ընթացքում պաշտոնեական դիրքի չարաշահման մեղադրանքներին:

94. Հետեւաբար, գնահատելով դիմումատուների սուբյեկտիվ ընկալումներն օբյեկտիվ ֆոնի վրա եւ Դատարան ներկայացված ապացույցի հիման վրա գնահատելով վիճարկվող միջոցի նյութական եւ ոչ նյութական ազդեցությունը, այն նաեւ եզրակացրել է, որ դիմումատուների պաշտոնավարման ժամկետների դադարեցման՝ նրանց անձնական կյանքի վրա ունեցած բացասական ազդեցությունը չի հատել Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված լրջության շեմը:

95. Հետեւաբար սույն հոդվածը կիրառելի չէ, եւ դիմումատուների բողոքը պետք է մերժվի՝ որպես *ratione materiae* անհամատեղելի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետին եւ 4-րդ կետին համապատասխան դրույթների հետ:

Բ. Կոնվենցիայի 14-րդ եւ 18-րդ հոդվածները

96. Դատարանը պարբերաբար պնդել է, որ 14-րդ հոդվածը լրացնում է Կոնվենցիայի եւ դրա համապատասխան Արձանագրությունների նյութաիրավական այլ դրույթներ: 14-րդ հոդվածն անկախ գոյություն ունենալ չի կարող, քանի որ գործում է բացառապես այդ դրույթներով պաշտպանված «իրավունքներից եւ ազատություններից օգտվելու» մասով: Թեեւ 14-րդ հոդվածի

կիրառությունը չի ենթադրում այդ դրույթների խախտում, եւ այդքանով այն անկախ է, դրա կիրառման հնարավորություն առկա չի լինի այնքան ժամանակ, քանի դեռ խնդրո առարկա փաստերը դրանցից մեկի կամ մի քանիսի գործողության շրջանակում են (տե՛ս Մոլլա Սալին ընդդեմ Հունաստանի [ՄՊ], թիվ 20452/14, § 123, 2018 թվականի դեկտեմբերի 19):

97. Ինչպես Կոնվենցիայի 14-րդ հոդվածի դեպքում, 18-րդ հոդվածն անկախ գոյություն ունենալ չի կարող. այն կարող է կիրառվել միայն Կոնվենցիայի հոդվածներից մեկի կամ դրա համապատասխան Արձանագրությունների համակցությամբ, որը սահմանում կամ որոշարկում է այն իրավունքների եւ ազատությունների շրջանակը, որոնք Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվել են ապահովել իրենց իրավասության ներքո գտնվող անձանց համար: Տվյալ կանոնը բխում է ինչպես դրա ձեւակերպումից, որը լրացնում է 5-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասության եւ 8-11-րդ հոդվածների երկրորդ կետերի դրույթները, որոնք թույլ են տալիս սահմանափակումներ այնպիսի իրավունքների եւ ազատությունների համար եւ Կոնվենցիայի 1-ին մասի այն վերջին հատվածում, որտեղ առկա են այդ իրավունքներն ու ազատությունները սահմանող եւ որոշարկող հոդվածները (տե՛ս Մերաբիշվիլին ընդդեմ Վրաստանի [ՄՊ], թիվ 72508/13, § 287, 2017 թվականի նոյեմբերի 28-ին, հետագա հղումներով, Նավալնին ընդդեմ Ռուսաստանի ՄՊ] թիվ 29580/12 եւ 4 այլ անձինք, § 164, 2018 թվականի նոյեմբերի 15, Սելահաթին Դեմիրտաշն ընդդեմ Թուրքիայի (թիվ 2) [GC], թիվ 14305/17, § 421, 2020 թվականի դեկտեմբերի 22, եւ Յուշիշինն ընդդեմ Լեհաստանի , թիվ 35599/20, § 306, 2022 թվականի հոկտեմբերի 6):

98. Հետեւաբար, քանի որ 8-րդ հոդվածով նախատեսված բողոքը *ratione materiae* անհամատեղելի է (տե՛ս վերոնշյալ 95-րդ պարբերությունը), 14-րդ եւ 18-րդ հոդվածներով սահմանված բողոքները՝ վերցված տվյալ հոդվածի հետ համակցությամբ, *ratione materiae* անհամատեղելի են Կոնվենցիայի դրույթների հետ 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով եւ ենթակա են մերժման՝ 35-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան (տե՛ս վերելում հիշատակված՝ Ջ.Բ.-ն եւ այլք, § 111):

III. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐԾԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

99. Կառավարությունը պնդել է, որ Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ ապագա եկամուտը՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով չի կարող համարվել «սեփականություն»՝ այդպիսով այդ հոդվածը դարձնելով ոչ կիրառելի:

100. Դիմումատուները պնդել են իրենց բողոքը:

101. Դատարանի կողմից հաստատված նախադեպային իրավունքի համաձայն՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը վերաբերում է անձի առկա սեփականությանը եւ չի առաջացնում գույքը ձեռք բերելու իրավունք: Ապագա եկամուտն այդպիսով չի կարող «սեփականություն» համարվել, քանի դեռ այն արդեն ձեռք չի բերվել կամ անշուշտ ենթակա է վճարման (տե՛ս վերելում հիշատակված՝ Դենիսովի գործը, §137, եւ Յուշիշինի գործը, § 344): Հետեւաբար սույն բողոքն *ratione materiae* անհամատեղելի է Կոնվենցիայի եւ համապատասխան Արձանագրությունների դրույթների հետ եւ ենթակա է մերժման՝ 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետին եւ 4-րդ կետին համապատասխան:

Այս հիմնավորմամբ Դատարանը միաձայն՝

ճանաչում է գանգատն անընդունելի:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2023 թվականի դեկտեմբերի 7-ին:

Ռենատա Դեգեներ

Գաբրիել Կուչկո-Ստադլմայեր

Քարտուղար

Նախագահ

Հավելված

Դիմումատուների ցանկը՝

Գանձատ թիվ 25240/20

Թիվ	Դիմումատուի անունը	Ծննդյան տարեթիվը	Ազգությունը	Բնակության վայրը
1.	Ալվինա ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ	1956	Հայ	Երևան
2.	Հրանտ ՆԱԶԱՐՅԱՆ	1959	Հայ	Երևան
3.	Ֆելիքս ԹՈՒՆՅԱՆ	1956	Հայ	Երևան
4.	Հրայր ԹՈՎՄԱՍՅԱՆ	1970	Հայ	Երևան